

„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolutions Arménienne

ԴՐՈՇԱԿ

Adresse:

REDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴՄԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1908—1909

Յաճախ ու անգուշ շարունակեց Իրանուքի վսեմ պայքարը անիրաւութեան ու ստրկութեան դէմ: 1908 թւականը ուկե տառերով կ'արձանագրէր տիեզերական պատմութեան էջերում: Ազատութեան դատը փայլուն, հազագին վաստակ ունեցաւ: Կոր Տօրիզոններ բացւեցին նրա առջև, մարդկային նոր զանգեւոններ վեր բարձրացան՝ մրափի ու անէութեան անդունդներէն և գրկեցին համամարդկային քաղաքակրթութեան դրօշը:

Կարլայեան մեծ, անլեզու համընդ էր որ շղթայազերծ ապարէզ նետեց, նոր կեանքի ու առաջադիմութեան գրուականով: Հին արևելքն էր որ կոնֆուցիոսներէ անյիշատակ ժամանակէն ի վեր առաջին անգամ արդարադրում էր մի այդպիսի առնական թուիչք, առաջին անգամ յաւանականորէն ծանուցանում էր ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան պանծալի սկզբունքները: Հին Արևելքն էր որ մի ժամանակ տեղ էր աշխարհին մարի, արևստի անհատնում գանձեր, բայց որ յետոյ բախտի մի քմահաճ տնօրինութեամբ, մի արատաւոր յետաշրջումով վերստին նետուել էր Փատալիստական անշարժութեան ծոցը, ուր և խարխափում էր տասնեակ դարերով, ստրուկ, անարգ ու արգաստելի, որպէս զազիր պարիաների մի անուանչ հօտ, որպէս քարացած մի վիթխարի:

Ռամկավարութիւնը աճեց, հարստացաւ նոր փառահեղ նւաճումով, արգարութեան ու միջազգային եղբայրակցութեան դարաւոր յոյսը նոր յորձանք տեց և տիեզերական բռնապետութեան սև ուրակները զարհուրանքով մի բայլ ևս յետ նահանջից, — մի խոշոր քայլ՝ նրա համար ճակատագրական ու աղէտաբեր:

Արևմտեան բռնակալութիւնը — թէ միագլխեան, թէ բազմագլխեան — մեծ յոյսեր ուներ իր արևելեան եղբայրակցի վրայ իր գոյութիւնը մշտնջենաւորելու համար: Հարստացած դարաւոր փորձով, նրբացած և հզօրապէս օժանդակած կապիտալիզմի պարզէներով նա ձգտում էր իր կեղծբիշ տիրապետութեանը ենթարկել ամբողջ վայրենի ու բարբարոս երկրագունդը, ամբողջ

հեռաւոր ու մերձաւոր Արևելքը, ձգտում էր ամրապնդել շղթաները այն բոլոր հոգի, նահապետական ժողովուրդներէ, որոնք քանի դեռ գեղեցեցեցեցեց անրկական մրափի մէջ, անտահաճան շահագործման նիւթ են մատակարարում քաղաքակրթութեան փիշակներին, իսկ երբ արմնացան, սթափուցին, իրենց ձեռքն առան իրենց սեփական ճակատագիրը, երբ բողբոջեց նրանց, գեղեցեցեց սեփական նախաձեռնութեան շինարարութիւնը, երբ նրանք զարկ տուին իրենց ձեռքին կոլւնոքրային ստեղծեցին իրենց ուրոյն ինքնաստրիան, արգիւնաբերութիւնը, փոխառուելով Արևմուտքից անհրաժեշտ գոյն գործօճները, երբ այդ արորւած, նահապետական զազութիւնները միահեծան տէր դարձան իրենց սեփական հողերին, հանքերին, հարստութիւններին, դա արդէն հսկիզբն էր վերջաւորութեան: Արևմտեան կապիտալիզմը որ իր գոյութիւնը յարատեւելու համար, միշտ աւելի ու աւելի հարկադրած է „արտահանել“ նոր Տօրիզոններ նւաճել, որ հարկադրւած է միջիտարիզմի յարածունդին, և հսկայական զոհերի գնով նորանոր սպառող շուկաներ գրաւել իր անարխիական արգիւնաբերութեան լեռնացած պոռոզները շահեցնելու համար: պէտք է այլ ևս կամաց-կամաց յետ նահանջի պէտք է հետզհետէ հրաժեշտ տայ „համաշխարհային շուկային“, գազութեանը բոլոր „վայրենի ժողովուրդներին“, որոնք իր կախածուկով կ'ուրեւն, պէտք է ամփոփել իր մայր երկրում, մայր պետութիւններէ շրջանակներում, որոնք շահագործանաճող լինելով վերջ ի վերջոյ պիտի ճայթին աշխարհաշառաչ սագնապներով ու սօցիալական ժայթքումներով:

Այդպէս է մեծ անզուգական կարեւորութիւնը այն յեղաշրջման որ կատարուեց անցեալ տարւոյ յունիսին մերձաւոր Արևելքում և որ արդէն զգալի է ամբողջ աշխարհում, անխուսափելի անդրադարձումը ամբողջ արևելեան լեռն, նոյնիսկ ամբողջ ասիական ու ասֆրիկական վարդափայտ կոթեցեան վրայ:

Արևմուտքը, ի գեմս իր ռամկավար, ազատասեր տարրերէ, մի վայրկեան ցաւոտ նախանձի շարժում ունեցաւ հանդէպ Արևելքի այդ յանկարծական տարու հպարտ սլացքի: Պատաւ եւ քաջանք զբաղւած էր մայր և զհայր սրտերով, անտեղ վաղուց ընդհատուել է բարձրագոյն

Թուիչ մարզանքների ու մեծադղորդ վերիվարումների ժխտը. ուսմավարումների անաշխն նախնայինները մեղմել են ժողովուրդների ատելութիւնն ու թափը, միջկայսրել, մանրացրել են պայքարը: Մի վայրկեան միայն Արևմուտքը ցնցեց և դա Գերմանիայում տեղի ունեցած մի անակնկալի ազդեցութեան տակ էր: Յասկոտ ու քմահաճ վեհապետը էլի մի խոշոր «բլըՖ» էր արել և Ֆէօդալական, կիսամիապետական Գերմանիան ծայրէծայր պէկոծել էր: Երկիրը միաբերան պահանջում էր վերջ դնել «անձնական ընթացի», սանձահարել վեհապետի քմահաճոյքը, որ վտանգում է երկրի շահերը, որ կարող է հասցնել աղէտալի հետեանքների: Թուում էր, թէ վայրկեանը հասել էր և եւրոպական ցամաքի ամենաուժեղ պետութեան մէջ, միլիտարիզմի դասական որրանում պիտի սահմանէր ճշմարիտ պարլամենտարիզմ, պիտի վերացէր Ալլհէյմ-Բիւլովեան կամայականութիւնը և պիտի հռչակէր վերջապէս, մինչև ստորներին իրական պատասխանատուութիւնը՝ ժողովրդական պատգամաւորութեան, Ռայխստագի առջև: Եւ այդ յեղաշրջումը համաշխարհային կշիռ ունեցող մի փաստ կը լինէր. երկիրը կ'ազատէր մի միապետի անձնական ընթացի պատուհաններից, — միապետի որ լինելով մի ահեղ բանակի բացարձակ տէրը, չարիք է դարձել միջազգային խաղաղութեան համար, որ այնքան յաճախ գրգռել ու փոթորիկել է պետութիւնների յարաբերութիւնները, մերթ Տրանսվալի նախագահին հեռագիր տալով: Անգլիայի դէմ նրան խրախուսելով, ապա ձգելով նոյն Տրանսվալը իր ճակատագրին, մերթ դաւելով: Ֆրանսիայի դէմ Մարոկոյում, Թատրոնական հարւածներ սարքելով ու եւրոպան սարսափի մատնելով և միաժամանակ միշտ ընկերային պարագլուխ հանդիսանալով, բոլոր արիւնոտ բռնաւորներին — Արդիւլ Համիդին, Նիկոլայ I-ին — քաջաբերելով ու աջակցելով... Ահա այդ մեծ, աշխարհի վրայ ծանրացած չարիքն էր, որ պիտի բառնար քաղաքական յեղաշրջումը:

Այդպէս չեղաւ, տարաբախտաբար. ազգային-ազատամիտ ու այլ կուսակցութիւնները, որոնք 50 տարուց ի վեր սիրով ճառում են լիբերալիզմի ու ժողովրդական իրաւունքների մասին, այս անգամ ևս դասալիք եղան ազատութեան ճակատամարտից. վճռական վայրկեանին պաղեց նրանց փքուն ու աղմկոտ խանդավառութիւնը և նրանք յետ նահանջեցին, գոհանալով Ալլհէյմ I-ի շարտած մի բանի զիջումներով:

Ցարկոյս չը կայ, այդ զիջումները ևս, իբրև ժողովրդական մի յաղթանակ, ունին իրենց ծանրակիշոր պատմական նշանակութիւնը. մենք տեսանք, թէ ինչպէս աշխարհի ամենահզօր, ամենագոռոզ հրամանատարներից մէկը իր սեփական կայսրութեան ամենաբարձր հաստատութեան մէջ յաջս ամբողջ աշխարհի

մտրակելուց, ծաղրելուց ու անպատելուց յետոյ, հանդիսաւոր «մեղա» էր գոչում իր ժողովրդի առաջ, հանդիսաւոր խոստում էր տալիս՝ երբէք այլ ևս ինքնագլուխ չը բռնել պատասխանատու որևէ գործ և չը խռովել երկրի անդորրութիւնը... Գա մի չափազանց ծանր վայրկեան էր մեծամուլութեան ախտով տառապող մի կայսրի համար և հօհեցողներեան արքայատոհմը էէր կրել այդքան ստորացուցիչ մի անարգանք վաթսուն տարուց ի վեր, սկսած 1848-ի անմուսնալի, կարմիր օրերից, երբ ապստամբների գոռու-գոչիւնի մէջ, նրանց պահանջով՝ թագաւորը ահաբեկած պատշգամ ելաւ և խոնարհաբար ողջոյն տւեց փողոցում փուլած ազատութեան նահատակների դիակներին: Գերմանիայի այժմեան կայսրը ևս, իր դիրքը պահպանելու համար բարեւոյց համարեց նախատանալ խոնարհել ժողովրդի կամքի առջև. բայց գերմանական ժողովուրդը քաղաքականապէս ու հոգեպէս բաւականաչափ արի չը գտնեց, որպէս զի ըստ արժանւոյն շահագործէր հազուագիւտ վայրկեանը և հասցնէր սկսած փոթորիկը իր ցանկալի ու տրամաբանական վախճանին: Միակ սօցիալիստական կուսակցութիւնն էր, որ գտնեց կացութեան բարձրութեան վրայ և ձեւակերպեց Ռայխստագի ու մամուլի մէջ երկրի կազմը հիմնականապէս բարեփոխելու անհրաժեշտ պահանջը: Բայց սօցիալ-դեմոկրատիային էլ պակասեց, ըստ աւանդութեան, կուսակցի իրակը... Այդպիսով Գերմանիայում ճշմարիտ սահմանադրական կարգեր հաստատելու մեծ խնդիրը մի անգամ ևս յետաձգեց անորոշ ժամանակով, մի անգամ ևս հիասթափութիւն ու ցաւ բերելով այն բոլոր անհատներին, որոնց հոգին խռովում է ի տես այնպիսի ժամանակագրական մի սխալի, ինչպէս այդ Ֆէօդալ-բռնապետական ուժի գոյութիւնը կանտի ու Շիլլերի հայրենիքում, 60 տարի անդրանիկ ազատագրական շարժումից յետոյ և 120 տարի յետոյ՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնից...

Ինչ արած... Ծանր, յաճախ գրեթէ յուսահատեցուցիչ դանդաղութեամբ է ընթանում համաշխարհային պրօգրէսի (առաջադիմութեան) անիւր. մարդկային հոծ զանգւածներին շարժել-մղելը յանուն ապագայ մեծ իրգէալների, անգամ յանուն իրենց առօրեայ կենսական շահերի — դիւրութեամբ չի լինում: Հնապաշտութեան, «նորասեցութեան» (novelesme) մի խոշոր բաժին մնում է տակաւին այդ զանգւածների արիւնի մէջ... Եւ այդ ինքնուրույն, կոյր, կամակոր անշարժութեան մէջ են բռնաւորները դանում միշտ իրենց կենսունակութեան ու բարգաւաճման մնունը...

Կուսակցական, այնուամենայնիւ, առաջ մղեց 1908 թւականին նաև արևմտեան եւրոպայում, շօշափելի յաղթանակներով ու նախնայիններով: Եւ համարձակ կարելի է ասել, ամենուրեք սօցիալիստական բանակներն էին խթան լինում այդ նորանոր նախնայինների:

Ֆրանսիայում մասնաւորապէս մենք ականատես եղանք մի ուշադրաւ ու խրատական երևոյթի։ Բազիկալիզմը (արմատական հոսանքը), որ տասնեակ տարիներից ի վեր համարում էր ինքզինքը որպէս հաւատարիմ ժառանգ ու շարունակող Մեծ Յեղափոխութեան ականգութիւնների՝ մերկացրեց իր ներքին բուրժուազական էութիւնը, հէնց որ միահեծան տէր դարձաւ երկրի ձախտագրի Յանձին իր «ամենածայրայեղ» թեւի, յանձին Ալեքսանտր մինիստրութեան՝ նա դրժեց մի քանիսը այդ փառահեղ ականգութիւններից, սկսեց արշաւանք բանւորական, սօցիալիստական համախմբումների դէմ, զօրքի միջամտութեամբ ու արիւնհեղուցիւններով ձնչեց գիւղացիական ու բանւորական դորժագույնները, ապացուցանելով իր այդ ընթացքով, որ բոլորժուազիան նոյնիսկ ի դէմս ամենարմատական իր հատուածի խորապէս պահպանողական է, յարգող դասակարգային առանձնաշնորհումների սրբագործող դասակարգերի անհաւասարութեան։ «Արմատականութիւնը», ճիշտ է, իրագործել է որոշ կարևոր բարենորոգումներ, թերևս պիտի իրագործէ և ապագայում, սակայն նա իր ներքին էութեամբ դարձեալ թշնամի է աշխատաւոր ժողովրդի լիակատար ազատագրութեան, թշնամի է քանի որ պահպանում, ներագործում է կապիտալիստական մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որից բխում են ժամանակակից անիրաւութիւնները, մասսաների ստրկացումն ու թշուառութիւնը։

Եւ — ուշադրաւ հանգամանք — ֆրանսիական խոշոր բուրժուազիան, միլիարդների, պերճանքի ու շքաշուքութեան այդ դասակարգը, որ տասնեակ տարիներից ի վեր սարսափում էր ըրգիկալիզմից ու մասնաւորապէս Ալեքսանտրից, տեսնելով նրա մէջ վաղեմի կարմիր ուրւականը — այսօր ուրախութեան ծափ է զարկում, և պարլամենտի ու իր քսու մամուլի մէջ յաճախ ջերմօրէն պաշտպանում է նոյն Ալեքսանտրին, որ թուում է նրան իսկական «փրկիչ», իր կոպիտ ու վայրագ արշաւանքով բանւորական պահանջների ու սօցիալիստական վարդապետութեան դէմ։ Միւս կողմից աշխատաւոր ժողովրդի անկեղծ բարեկամները բոլոր երկրներում զգացին — անցեալ տարի աւելի ուժգնութեամբ, քան երբևիցէ — որ տնտեսական ճշմարիտ, լիակատար ազատագրութիւնը սօցիալիզմի գաղափարի մէջ է, որ պիտի ընթանայ համատարած, աշխարհակալող պրօպագանդով, յենւած բանւորութեան, գիւղացիութեան, արհեստաւորութեան ու մտաւորականութեան անվթար ու գիտակից տարրերի վրայ, կուելով մշտնջենապէս ձրիակեր դասակարգերի դէմ, պաշտպանելով մշտնջենապէս աշխատանքի սրբազան դատը՝ ընդդէմ կապիտալի առանձնաշնորհումների։

Բազիկալիզմի ամենակարող պարագլուխը, մինիստրնախագահ Ալեքսանտր ուխտագրուծ եղաւ ոչ միայն ներ-

քին, այլ և արտաքին քաղաքականութեան էական հարցերում։ Նախկին կատաղի յեղափոխականը, նա որ քանիցս, յանուն ռուսկափարութեան ու միջազգային արդարութեան բողոքել էր «գաղութային արշաւանքների» ու նորանոր նւաճումների դէմ, նոյնիսկ ապայել էր ամբողջ մինիստրութիւններ — մէկէնիմէկ նա ինքը դարձաւ գաղութային քաղաքականութեան ռահվիրայ և երկար ամիսների ընթացքում տանջեց երկիրը Մարօկկոյի վտանգաւոր արկածներով, որոնք սպառնում էին համաւերօպական հրդեհ յարուցանել։ Այդտեղ ևս, սօցիալիզմն էր, որ յանձին ժօրէսների ու Պրեսսանսսէների, զարկեց ահագանգը, շարունակական հարցապնդումներով յուզեց հանրային կարծիքը, մամուլի ու հրատարակական ժողովների մէջ անդադար նշաւակեց ֆրանսիական կառավարութեան տմարդի ընթացքը, Մարօկկոյի դժբախտ ժողովրդի անխնայ ու մասսային գընդակահարումները՝ յանուն մի բուն ընչաքաղց կապիտալիստների շահերի։

Եւ սօցիալիստական այդ արշաւանքն ապարդիւն չ'եղաւ։ Նա սանձահարեց արկածախնդիր ու շօլինիստ տարրերի ակտիւիստները, ստիպեց կառավարութեանը ի վերջոյ յետ քաշել ժողովրդասպան պատերազմի դաշտից և այսօր ահա ծանուցում է իլուր աշխարհի մի մեծ իրողութիւն — Ֆրանսիայի մասնական համաձայնութիւնը Մարօկկոյի շուրջը, որ վայրկենաբար փարատեց քաղաքաբիրութ աշխարհի վրայ ծանրացած կոշմարը և գլորեց մի մեծ խոշորոտ ազգերի համերաշխութեան ձանապարհից։ Հանրային կարծիքի ճնշման տակ, երկու կառավարութիւնները փոխադարձ զիջումներով համաձայնութեան եկան։ Ֆրանսիան ընդունեց Գերմանիայի իրաւունքը՝ ազատօրէն առաջ մղելու անտեսական ձեռնարկները Մարօկկոյում, որի դռները բաց հռչակեցին բոլորի համար, իսկ Գերմանիան ձանաչեց Ֆրանսիայի յատուկ շահերն ու իրաւունքները Ալժիրի սահմանակից երկրի մէջ։ Առօրի հոտը չբացաւ գէթ այդ հօրիզոններից, Մարօկկոյի համար պատերազմ չի լինի... Երկու երկրների սօցիալիստ կուսակցութիւններին է հասնում պատուի մեծագոյն բաժինը այդ բախտաւոր իրողութեան մէջ։ Նրանք հասկացոյն ամեն առթիւ իրենց կառավարութիւններին, որ միլիոնաւոր պրօլետարիատը բնաւ տրամադիր չէ պատերազմելու, իր նմաններին, իր վիճակակից եղբայրներին կոտորելու, յանուն բուրժուակապիտալիստական աստուածների։ Նրանք մերթ ընդ մերթ — Շտուազարտի համագումարում և անցեալ հոկտեմբերին Բրիւսելի Բիւրօյի նիստերում — սպառնացին, որ պատերազմի դէպքում երկու երկրների բազմամիլիոն սօցիալիստ աշխատաւորները կարող են ոչ միայն չը հետեւել իրենց բուրժուա հրամանատարների կոչերին, այլև նոյն իսկ վտանգել կապիտալիստական կարգերի գոյութիւնը։ Հակամիլիտա-

րիտանական հոսանքը գրաւել է Ֆրանսիայում ամբողջ գաւառներ, նա մղում է — թէև ոչ անբնական բացարձակ ձևով — նաև Գերմանիայում, ինքը Բեռլինը յայտարարեց միանգամ բարձրագույն որ Վիլհելմ I-ի կառավարութիւնը չը պետք է պատերազմի դէպքում մեծ յոյս տածէ գերմանական մի քանի միլիոն սօցիալիստ աշխատաւորութեան վրայ: Այդ բոլոր արտայայտութիւնները չեն մնում, հարկաւ, լաւանց ազդեցութեան իշխող գնահարգերի վրայ, որոնց շարունակում է ահաբեկել սօցիալական յեղափոխութեան ուրակները:

Ֆրանսիացի Գերմանական համաձայնութիւնը նախապատրաստելով նրա համար երկար անդադրում բարոյ մղելով երկու երկրների սօցիալիստական կուսակցութիւնները այս անգամ ևս կանխեցին մի մեծ ընդհանրում, որ — ինչպէս բոլոր նման ընդհանրումները — պիտի կատարէր լոկ իշխող դասակարգերի ցանկութեամբ, նրանց շահերի հակամարտութեամբ: Նրանց դաւերով և ի վնաս, ի կործանումն բուն աշխատաւոր ժողովուրդների:

Որքան նիզակներ էին ջարդել ժողովներն ու Բեռլինները երկու վաղեմի թշնամիների այդ փոխադարձ մերձեցման համար: Այժմ նրանք հպարտութեամբ կարող են դիտել զործի սկզբնաւորութիւնը իրենց ճիգերի պսակ-արդիւնքը: Ֆրանսիացի Գերմանական մերձեցումը յի է ծանրակշիւ հետևանքներով: Երկու քաղաքակիրթ ժողովուրդները չը պիտի դեգրեթիւն յաւիտենական ու աղէտաւոր թշնամութեան մէջ, երկուսի շահերն էլ թելադրում են իրարու մօտենալ և խաղաղութեամբ լուծել առկախ ու ահաւոր կեանքները: Առաջին քայլին կը յաջորդեն անտարակոյս ուրիշները, ժողովուրդը երկուստեք միշտ աւելի կը ծանրանայ կշիւ վրայ, կը թելադրէ կառավարութիւններին իւր կամբը երկու ազգերի յարաբերութիւնները հետզհետէ կը մտերմանան և այդ հանգամանքը անդրադառնալով եւրօպական կարող ենք ասել տիեզերական կացութեան վրայ, հանգսնելով պատերազմների մեծագոյն աղբիւրները կը նիւթէ վերջապէս այն բարձալի պայմանը միջազգային այն յարաւե, անվրդով խաղաղութիւնը, որ կողմուրդներն կը ընթանայ անկաշկանդ առաջադիմութեամբ և ժողովուրդները ազատած պարբերաբար իրար յօշոտելու անհրաժեշտութիւնից, աւելի ամուր կը կոխեն համերաշխութեան դաւանանքը, աւելի ընդարձակ թուիչք կը տան սօցիալական ազատագրութեան պայքարին, ուղղելով իրենց բովանդակ ճիգը մարդկութեան գիշատիչների դէմ:

Գերմանիայի բարդեական և օւղեցիտի մէջ իբրև հետաքրքրական ու հաճելի մի նորութիւն, յիշենք և այն մի քանի մասսային չազմայող ցոյցերը, որ անցեալ տարւայ ընթացքում կազմակերպեցին այդ երկրում սօցիալ-դեմոկրատիայի կողմից — գլխաւորապէս բողո-

քելու համար պրուսական Լանդտագի ընտրողական արատաւոր սիստեմի դէմ: Անսովոր բան էր տեսնել թէ ինչպէս տասնեակ հազարաւոր բանւորներ դրօշակներով և երգերով գրաւում են հօհենցօլլերներեան մայրաքաղաքի փողոցները, տեսնել մանաւանդ թէ ինչպէս սօցիալիստական պրօլետարիատի այդ հեղեղը գրոհէ և սուտալիստի դէպի կայսերական անպարանքները, սպառնալից լով բար ու քանդ անել հա յիրաւի մի ուշագրաւ և անբարեխալի նորութիւն է գերմանական սօցիալ-դեմոկրատիան փորձեր է անում թօթափելու իր անանգամնական կրօնորականութիւնը և այդ ազմական փորձերի ցանկագատիւր գրեթէ ամբողջապէս պատկանում է Էրլանդ-Բերնշտայնին: «Րէվիզիօնիզմի» համբաւաւոր թէօրիստիկոսին հռչակած իբրև մեղմ, շափաւոր, օպորտիստիստ նա տեւց այնուամենայնիւ յեղափոխական մտնածեկակերպի մի անթիտեյի ապացոյց, որ ծարճելով մասնաւորապէս ցոյցերի գաղափարը, որ ունի մի քանի երկրներ, յում, մանաւանդապէս Աւստրիայում: Ընդհանուր ընտրողական իրաւունքի մեծ պայքարի միջոցին, տեւել է փայլուն, բեղմնաւոր հետեւանքները սօցիալ-դեմոկրատիան հրաժարւեալ էր այդ ընթացքից, սովորաբար պատճառաբանելով թէ «հրացանազարկ կանեն, ժողովուրդին բերնշտայնի առաջադրով ու ջանքերով էր, որ պրուսական սօցիալիստների համագումարը որոշեց պարբերաբար «գրաւել փողոցը» և բողոքի թափօրների կազմակերպել խելուն համար ընդհանուր ու հաւասար ձայնատուութիւն Պրուսիայում (Լանդտագի ընտրութիւնների մէջ) — ջնջելու համար ընտրողական մի սիստեմ, որ ծառայում է մտակալ փողատէր ու անանգամնաւոր շնորհաւ դասակարգերին կոտելու համար անհասարակաբոլոր բացահիկ հակաժողովրդական պահանջներին դէմ: «Բացառիկ օրէնքների» ուրակները 1908 թւայ շտապ կանի ընթացքում նորէն ձայնաւեց Գերմանիայում սօցիալիստական շարժման դէմ, իշխող դասակարգերը մի քանի անգամ գործեալ սպառնացին կրկնել 1878-ի դրակօնական ձեւումները, թուրք զնել սօցիալիզմի յարաձուլ հոսանքի առջև բայց դա մնաց ևս կը մնայ միշտ լոկ սպառնալիք դիւրին բան չէ բացառիկ օրէնքների ենթարկել ժողովրդի մի ահագին հասանաճը, որ ունի երեք անգամ և քաւի լի օւնը նոր օրոյս օգնելու և լի սպառնալիք աքցիւն երկրի մէջ: Նոր օրոյս օգնելու բողոք հնացած կարգերի դէմ, սօցիալիզմի ուսումնականութեան կոտելու յանուն նորանոր բարեփոխումներին ստաջ մղեց նաև յօրիշ երկրների պարլամենտներում և Անգլիայում և որ աշխատաւորական կուսակցութիւնը (Labour Party) բեւարկելուց ճեքու է ին երկին ապահովող մեծ օրէնքը և Աւստրիայում որ աշխատաւոր նոյն սօցիալիստ կուսակցութիւնը ի դէմս իր հռչակաւոր պարագլուխ Սոլերի,

միակն ընդհանուր էրքը ցոյց տեւց իր երկրի կանաւա-
րութեանը քաղաքական տախնապի միջոցին պահանջե-
լով մտցնել Բօսնիայի ու Հերցեգովինայի մէջ սահմա-
նադրութիւնը աւակավարական միութեամբ, ու այդպիսով
զինաթմափանել դրսի անելութիւններն ու պատերազմի
վտանգը...

Սօցիալիզմը կուրի առաջապահ էր անգամ Ռուս-
տաստան անուամբ նրա Պետական Դուռմայի մէջ ուր
բերքեմ մեծաքանակի այժմ փորձութիւն ծայրէծախա-
կողմը սահմանադրական աւակավարականների հետ
միացած, յաճախ նրանցից շատ անաջ անցնելով շա-
րունակեց անկողմնանների ու կենտրոնի վարչների աղա-
ղակների մէջ մերկացնել երկրի վերքերը և աշխարհի
ու շարժութեանը մատնել ցարիզմի անհասնում ու ծիրները
հերքին բարենորոգումների տեսակէտից վերջին թուա-
կանը նմանց իր երկու նախորդներին։ Այժմ մի քայլ
չարեւեց դէպի երկրի իրական խաղաղացումը 1905-ի
հոկտեմբերեան մանիֆեստը շարունակեց մնալ մեղած
տառ։ ցարը մեծ իշխանները մինիստրները ամեն առթիւ
զգալ աւելն Ռուսաստանի ժողովուրդներին որ ոչինչ չի
փոխւած այդ երկրի դարաւոր կացութեան մէջ որ նա
մնում է միահեծան ինքնակալ բանապետութիւն, չը
նայած պարլամենտարիզմի այն այլանդակութեան, որ
զորոհուում է յերրորդ Գուռմա։ Մինիստրներից մէկը
թոյլ տուեց իրեն մինչև իսկ հրապարակօրէն Գուռմայի
մամբիտից ծաղրել ժողովուրդների անբաւ զոհողութիւն-
ներով և ձեռք բերւած համեստ նւաճումը։ Ամբողջ
բանապետական կամարիլլան ցնծում է իր տարած յաղ-
թանակի գիտակցութեամբ և դահճի ձեռքը անդարար
գործում է յեղափոխական երիտասարդութեան դէմ
ամբողջ յայնատարած կայսրութեան մէջ։

Արտաքին յաշարհը և շարունակեց ժպտալ հիւսի-
սային բանակալութեան ցարիզմը շարունակում է վաճ-
յելը արևմտեան խոշոր բուրժուազիայի համակրանքը
և դրամական առաւաճեւն արակցութիւնը ներքին
խաղաղութիւնը ապահովելու համար լուրջ խօսքով
յեղափոխական շարժումը բնաջինջ անելու նպատակով
փոխառութեան բոլոր ձեռնարկները պակասում են աղո-
ղութեամբ եւրօպական կապիտալիստները եղբայրական
ձեռք են մեկնում Պետերբուրգի հարստահարիչներին,
սնուցանում ու ամրապնդում են յհամաշխարհային
Բաստիլը թէպէտ և գիտեն խոստովանում են որ
այդ ճիւղերը չեն կարող ունենալ յարատև արգիւնք
որ իրենց հովանաւորեալը մի խարխուլած ծայրէծայր
փտած գոյութիւն է որի բոլոր անդամներից տարած-
ւում է հաշարհի շորս կողմերը մի անհնարին գար-
շահառութիւն։

Յարիզմի այդ կատարեալ նեխւածութեան ամենա-
հասարակ փաստերից մէկը այսօր իբրև պատմական մի
անուրբ աննախընթաց հրէշաւորութիւն ապշանքի ու

ցասման մէջ է ձգել ամբողջ մտածող մարդկութիւնը
՛՛Գրօշակի՛՛ անցնել ճամարում մենք յիշեցնեմք սոսի-
կոն յեղափոխական Ազգի վիճակը դէպքը Բանի գեղում նա
բարեգնում է նոր նոր այլանդակ գաղտնիքներէ հրա-
պարակ հանում որոնցով այսօր լեցուն են Ռուսաստանի
ու Արևմուտքի մամուլի էջերը Գուրս է գալիս որ
տարիներից ի վեր ՛՛գաղտնի՛՛ ամենազօր ոստիկանու-
թիւնը—ստրուկ երկրների այդ անխոստիելը, յաւի-
տենական անարգանքը—իր մի հմուտ գործակալի մի-
ջոցով շարունակ յարաբերութիւններ է պահպանել
յեղափոխական միութեան կուսակցութեան հետ և
չնորհիւ այդ կապերի ոչ միայն սխտեմատիկաբար ուր-
սել է դահճի երախը նետել հազարաւոր անձնուրաց
մարտնչողներին, այլ և—մղած անձնական դժգոհու-
թիւններից տարած թայֆայական կարիէրիստական մի
զարհուրելի մրցութեամբ—նոյն գաղտնի ոստիկանու-
թիւնը դաւել է շարունակաբար բարձր պաշտօ-
նական ոստիկանութեան դէմ կազմակերպել է մի
շարք յինչոր՝ մահափորձեր, մասնակցել է մինիստր
Սիգիսմունդի նահանգապետ Բօղրանովիչի ամենակարող
Պէլլէի, մեծ իշխան Սերգի Ալէքսանդրովիչի, զինուորա-
կան գատախաղ Պավլովի, կոմս Կոնտալիսի վի գեներալ
Միննի սպանութեան փորձերին...

Ահա այդ արտառոց նորութիւնն է որ հակապական
տեղեւորութի պէս այսօր հրապարակ է նետել որպէս զի
մի աւելորդ անգամ արտասանէ քաղաքակիրթ ու դե-
մոկրատ շախարհի առջև ցարիզմի բարոյական մահա-
վճիւր։

Անհուն կսկիծ է յարուցանում մեր շարքերում
Սօցիալիստ-Եղափոխական կուսակցութեան այդ անօրի-
նակ ու տախնապի ձախորդութիւնը Վինել երկար
տարիների ընթացքում այնքան ցածօրէն դաւաճանւած
մի ընկերից որ վայելել է ամբողջ կուսակցութեան
սէրն ու յարգանքը իմանալ յանկարծ որ այդ տա-
ղանդաւոր կազմակերպողը բոլոր ահարկու գաւադու-
թիւնների այդ ամենազօր ու աներեւթ ոգին բոլոր
կուսակցական արկածների այդ անբաժան յընկերը՝ մի
ստոր անարգ մատնիչ է ոստիկանական մի գործակալ
որ մահւան գիրկն է նետել ուրիշ անհամար կործ ու
թանկագին ընկերների կուսակցութեան ու գաղափարի
իսկական անաքեալներին։ Այն արգեօք աւելի մեծ
պատիժ անելի դժգոհ մի աղէտ յեղափոխական մի
մարմնի ալէճուփ գոյութեան մէջ։

Յուսով ենք սակայն որ այդ սարսափելի յայտնու-
թիւնը կունենայ նաև իր բարբար հետեւանքները
Հռչակաւոր յմարտական կազմակերպութիւնը՝ կը վե-
րանորոգէ անտարակոյս կը վերակազմէի գուցէ նաև
սօցիալիստ յեղափոխականների կենտրոնական մարմինը
և նա զտելով իր շարքերը բոլոր կապեալեալ տարե-
րից իր ծոցն աննելով ըստ առաջնօրն երկրի ամենա-

առնական, ամենակորովի երիտասարդութիւնը՝ նորէն կը նետուի «մեծ, արիւնոտ ձեռնարկների» ճանապարհը— այս անգամ արդէն իր բովանդակ ուժը ծառայեցնելով ժողովրդական ազատագրութեան վե՛հ գործին...

* * *

Տ ա ճ կ ա ս ա ն ը բախտի բերմամբ կանխեց Ռուսաստանին: Ասում ենք՝ «բախտի բերմամբ», որովհետեւ կուլտուրական առաջադիմութեան տեսակէտից, մտաւոր ու յեղափոխական ուժերի կողմից տարբերութիւնը ահագին է երկու երկրների միջև, վերջինը անհամեմատ բարձր է առաջինից: Եթէ ճիշտ լինէր Ֆրանսիական յայտնի ասացածը՝ «*Les peuples ont les gouvernements qu'ils méritent*» (ժողովուրդները ունենում են իրենց արժանի կառավարութիւնները)— ապա Ռուսաստանը, որի զարգացման ընդհանուր մակարդակը շատ աւելի բարձր է և որի յեղափոխական շարժումը գինւորական հզօր խլրտուճների ձևով սկսել է դեռ մօտ 100 տարի սրանից առաջ, պէտք էր Թիւրքիայից շատ առաջ վայելէր սահմանադրական կառավարութիւն: Այսօր, սակայն, հակառակն ենք տեսնում և մինչդեռ ահագին, հարիւր միլիոնաւոր զանգւածը ֆիննական ժայռերից մինչև Լեհաստանի հովիտներն ու Կովկասեան լեռնաշղթան շարունակում է ըստարեւել աշխարհի մէջ այժմ այլևս եզակի բռնակալութեան ճիրաններում, անդին՝ փոքր Ասիայում, քաղաքակրթութեան դրօշակին դեռ նոր փարոզ թիւրք, բիւրդ ու այլ կիսանօմար թափառական ժողովուրդներն ունին արդէն սահմանադրական կարգեր և իրենց ուղածին պէս վայր են գլորում անհնազանդ կառավարութիւններին: Պատկերը— մի կողմից՝ վշտառիթ, անմխիթար, միւս կողմից՝ ոգևորիչ, սրտապնդող...

Թիւրքիայի ժողովուրդները ևս, անշուշտ, ինչպէս երկրագնդի բոլոր ուրիշ ժողովուրդները, վաղուց արժանի են այդպիսի կարգերի... Ո՛ր արդեօք աշխատաւոր ընդհանրութիւնը իր դարաւոր տառապանքներով, իր անհուն ու ցաւոտ զոհաբերութիւններով չի արժանացել աւելի լաւ, աւելի մարդավայել մի ճակատագրի... Սակայն, մի կողմից այդ ընդհանրութեան տգիտութիւնը, միւս կողմից իշխող դասակարգերի բազմադարեայ, ժառանգական յաւակնութիւնները, բռնաւորների «ասուածային ծագման» չարաշուք դաւանանքը, կղերի յօժարակամ ու շահախնդիր կողմնակցութիւնը բռնաւորների և մի շարք ուրիշ ձախորդ, աղէտաւոր գործունեւոր ձգտել են ամենուրեք յաւերժացնել կեղեքման ու հարստահարութեան ընթացքը, բռնադրել են ամենուրեք հալալ, ազնիւ աշխատանքի բազմամիլիոն լէգէօններին անարժան կառավարութիւնների կամքը, քմահաճօքը... մինչև որ հանգամանքներից նպաստաւորաւճ պատմական գիտակից փոքր ասնու

թիւնը գործօն կերպով հրապարակ է իջել և արիւնոտ կամ անարիւն ըմբոստացումով յետ է խել ոտնահարած իրաւունքը, հաստատել է վերջապէս գէթ մօտաւոր հաւասարակշռութիւն, գէթ մօտաւոր նմանութիւն՝ կառավարութեան ուժ ու զօր ու զիշահերի միջև:

Թիւրքիայում այդ փոքրամասնութիւնը ձուլել էր նախ քրիստոնեայ փոքրութիւ, կրկնակի ու եռակի ճընշւած, հալածւած ժողովուրդների մէջ: Դեռ ընդամենը մէկ տարի սրանից առաջ օսմանեան կայսրութեան սահմաններում, եթէ բաց թողնենք հեռաւոր Եմենը, բուն, գիտակից, կազմակերպւած յեղափոխական տարր ներկայացնում էին միմիայն հայերն ու մակեդոնացիք: Նրանց անջատ շարժումներն էլ հանդիպում էին մի կողմից դիւանագիտութեան անյաղթելի *velo-* ին, միւս կողմից իշխող ազգութեան և մանաւանդ նրա «իդէօլօգներին», մտաւորականների դիմադրութեան: Բայց նոյն այդ «գեաւուր» յեղափոխականների երկարամեայ կռիւ ու տառապանքի ազդեցութեան տակ, իրերի անխուսափելի բերմամբ, ծայր էր տուել խմոր ու մը՝ նոյն իրեն, մահմեդական ամբոխի ծոցում... Երկու նախորդ թւականների յուզումները — Էրզրում, Կասսեմունի, Բիթլիս — թէև բաօսային, անկազմակերպ, առանց նպատակի պարզ գիտակցութեան, բայց արդէն ազդարարներ էին մօտալուս Զարթնումի: Թիւրք ամբոխը, կարելի է ասել, կանխեց թիւրք մտաւորականութեան, «Երիտասարդ Թիւրքիային»: Նա զարկ տուեց այդ վերջինի կազմակերպման: Նա փոքր ինչ կրակ մտցրեց «իդէօլօգներին» պաղ ու անշարժ խառնածքի մէջ: Նրա բարերար ազդեցութեան տակ «Երիտասարդ Թիւրք» կուսակցութիւնը սթափւելով, սկսեց խորհել միջոցներ՝ հրդեհը աւելի և աւելի ծաւալելու, միաժամանակ սկսեց մօտենալ «Դաշնակցութեան»:

Թիւրք ժողովրդի այդ յանկարծական, թէկուզ և կցկրտուր, զարթնումը որոշ յոյսեր ներշնչեց և հայ մարտական կուսակցութեան: Նա պատրաստեց, կարելի է ասել, քրիստոնեայ ու մահմեդական յեղափոխականների համաձայնութիւնը, որ կնքեց անցեալ պատմական թւականի արշալոյսին, Պարիզում, Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ ու ջանքերով: Այդ համաձայնութեան անդրադարձումը կացութեան վրայ, նրա բարոյական ազդեցութիւնը անժխտելի է: Մտքերի խմորումը թիւրք գիտակից խաւերի մէջ առանձնապէս ուժեղեցաւ Եւրօպայի փոքր ինչ վճռական միջամտութեամբ Մակեդոնիայում, Բեֆօրմային նոր ծրագրով, — մի միջամտութիւն, որ շրջահայեաց ու սրտացաւ առձիկներին ցոյց էր տալիս պետութեան նոր անդամահատման հեռանկարը...

Եւ կատարեց բարեբաասիկ «անակնկալը», որ, սակայն, վաղուց սպասւած տրամաբանական յարգիւնքն էր քրիստոնեայ ու մահմեդական լաւագոյն տարրերի եր-

կարասե խաղաղ ու արիւնտ ճիգերի, կուր ու անօրինակ մարտիրոսութեան: Կատարեց նա մի դասակարգի ձեռքով, որ սովորաբար բռնապետութեան նեցուկ է լինում ամենուրեք, որի յամառ, անշարժ ու պողպատեայ զանգւածների տակ ճարճատեց, ընկաւ Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը...

Օսմանեան սահմանադրութիւնը այսօրեայ մեծագոյն իրողութիւնն է, որքան էլ նա լինի. թերի, արատաւոր, որքան էլ մասնաւորապէս, հայ ժողովուրդը գանգատելու տեղիք ունենայ: Նա ամուր կանգնած է սուլթանական բռնակալութեան փլատակների վրայ և թուում է թէ ոչ մի «պետական հարւած» չի կարող այլևս սասանեցնել նրան: Վերջին դէպքերով — որոնց ճշգրիտ գնահատութիւնը վերապահւած է ապագային — օսմանեան պարլամենտարիզը յամենայն դէպս տեց իր ուժի ու կենսունակութեան առաջին խորիստ ապացոյցը: Ժողովրդական ներկայացուցչութիւնը մի համարձակ ժեստով ճանապարհ դրեց քեամիլ փաշային և հրաւիրեց նոր մեծ վիզիր, որ հանդիսաւոր խոստում տեց՝ ամեն պարագայում համակերպել պարլամենտի գերագոյն կամքին: Նոր մեծ վեզիրը, Հիլմի փաշան, հրապարակ եկաւ, իբրև «Միութեան ու Առաջադիմութեան» կոմիտէի թեկնածու և իբրև առաջին զուտ սահմանադրական մինիստր-նախագահ: Մօտիկ ապագան ցոյց կը տայ, թէ «Մ. և Յ.» կոմիտէի այդ նոր փայլուն յաղթանակը մինչև ո՞ր աստիճան կը լինի յ ա ղ թ ա ն ա կ ի ս կ ա կ ա ն պ ա ղ լ ա մ ե ն ս ա ռ ի զ մ ի և գրաւական ժողովուրդների բարգաւաճման...

* *

Հայոց կեանքը... Տասնութ տարի շարունակ, իւրաքանչիւր տարւայ տեսութեան մէջ, այս թերթի էջերում, տխուր ու տաղտկալի միակերպութեամբ արձանագրում էինք այդ կեանքի սարսափները միայն: Ս ա ռ ս ա փ ը, յիրաւի, միակ էական ստորագելին էր այդ անօրինակ գոյութեան՝ որ իր օրհասական ու աղետարշ գալարումներով ապշեցրել էր բազմապիսի մարդկութիւնը և առաջնակարգ, գրեթէ եզակի տեղ է գրաւել համաշխարհային մարտիրոսագրութեան մէջ:

Այսօր առաջին անգամը տարեմուտի մեր յօդւածի մէջ խզում ենք անցքերի ու խոհերի եղերական շարքը և եթէ երբէք, անգամ ամենամուայլ դրւագներում, մենք անձնատուր չենք եղել մեղկ, սպանիչ յոռետեսութեան, եթէ միշտ անվհատ ու յուսալառ բայլել ենք արհաւիրքների միջից դէպի գալոց, անխուսափելի արշալոյսները — ապա այսօր աւելի ևս տողորւած ենք ջինջ, լաւատես վստահութեամբ դէպի ապագան: Յոյսի հզօր ճառագայթները սփռուում են մեր նահատակ երկրի վրայ, թէև այնտեղ դեռ շարունակուում են հարստահարութիւնն ու անիրաւութիւնը: Դժոխքն անցանքը,

թէև տակաւին շատ հեռու ենք դրախտի, նոյնիսկ ժամանակակից բուրժուական «դրախտի», երանութիւններից:

Ի՞նչ սոսկալի պատկեր էին ներկայացնում հայկական գաւառները սահմանադրութեան նախօրեակին... Ասպուրականը մասնաւորապէս, բունել էր մի խնթ ու անողորմ հալածանքով: Գաւառան Վալթի մասնութեամբ բացւել էին Հ. Յ. Գաշնակցութեան ղէնքի խոշոր պահեստները, և Երլդզի հրահանգով ու արիւնարբու մի վալիի ղեկավարութեամբ՝ զօրքն ու ոստիկանութիւնը, մօրեխի պէս սփռուած ամբողջ գաւառը խուզարկում էին, թալանում, ծեծում, բռնաբարում: Ստեղծւել էր մի անհարին կացութիւն, որի հանդէպ անհրաժեշտ էր ի գործ դնել բոլոր հնարաւոր միջոցները... Գիմուսներ եղան Պարիզ ու Լոնդոն. անգլիական պարլամենտի մի բանի անդամներ հարցապնդեցին Ասպուրականի սարսափների առթիւ, մամուլը նորէն խօսեց երկու երկրներում և հանրային կարծիքի ճնշման տակ երկու կառավարութիւնները որոշ քայլեր արին, դրութիւնը փոքր ինչ մեղմացաւ սակայն — ընդ երկա՞ր...

Օսմանեան յեղափոխութիւնը պայծեց այդ ժամանակամիջոցում. նա եկաւ տակն ու վրայ անելու և միջազգային մի շարք յարաբերութիւններ: Նա յայտարարեց ի միջի այլոց, որ Բերլինի դաշնագրի 61-րդ, 23-րդ յօդւածները այլ ևս կորցնում են իրենց գոյութեան իրաւունքը, որ հայկական, մակեդոնական խընդիրները, վերցւելով միջազգային դիւանագիտութեան սեղանից, դառնում են օսմանեան պետականութեան ներքին խնդիրներ, կապուում են Տաճկաստանի ընդհանուր ու հիմնական վերանորոգման հետ...

Հայ ժողովուրդը և Հայ Յեղափոխական Գաշնակցութիւնը սպասում են յեղափոխութեան այդ հանդիսաւոր յանձնառութիւնների իրագործման: Հայ տարրը օսմանեան կայսրութեան շրջանակներում կարող է իրօք ու տեւականօրէն բարգաւաճել միայն այն պայմանով որ նրա ազատութիւնը կցորդւի բոլոր շրջապատող ժողովուրդների, ամբողջ Թիւրքիայի ազատութեան ու նօրմալ բնականն առաջադիմութեան:

* *

Կապանքները խորտակեցին և ազգը կոչեց կուլտուրական շինարար աշխատանքի: Հսկայական բանտը բացւեց և նրա մուայլ խորշերից դուրս վազեցին հարւաւոր կենդանի մեռելները. թանկագին, անգնահատելի ընկերներ՝ որոնց ընդմիշտ կորած էինք համարում, յաւիտեան թաղւած սուլթանական զնդաններում, մէկէնիմէկ յարութիւն առան և այսօր նրանցից մի քանիսը բազմած են արդէն համաօսմանեան պարլամենտում, ուր իրենց կեանքով ու գաղափարներով

իրենց մղած պայքարով ու հերոսական նահատակութեամբ ներկայացնում են բուն, մարմնացած, ուսակա վարական ազնուութիւնը:

Ողջո՞յն նրանց, Հայ ժողովուրդը երկար տարիների իր լքման ու յուսահատութեան մէջ մի անգնահատելի գանձ է ունեցել — իր գահափառ արքային, որ տասարդու թիւնը, որ երբէք չի լքել նրան, որ միշտ բաժանել է նրա տառապանքը, սիրտ է տւել նրան ծանր օրերուս: Այսօր դարձեալ նոյն անձնուրաց երիտասարդութիւնն է հրապարակի վրայ, հայրենիքի վշտակների մէջ գեղջկական մութ ու ծխախրճիթներու, տենդային ու բեղմնաւոր աշխատանքի շուրջը, նա է — որք ու աւեր հայրենիքի միակ զարգը, ազգի լաւագոյն յոյսերի մարմնացումը...

Իսկ ո՞ւր է «Ազգը»... Ո՞ւր են այն տարրերը, որոնք ունին միշտ իրենց զազրելի շրթունքների վրայ «ազգ», «հայրենիք» բառերը, որոնք սակայն պատրաստ են միշտ լքել ժողովրդին, նրա գոյութեան պայքարի ամենավճակաւ: Դրա գններուս: Ո՞ւր է ներկայ հանդիսաւոր ու տաճնապալի վայրկեաններուս մեր զրամատէր դասակարգը, մեր թիւրքահայ ու առասպալ կրեստները, հարիւր միլիոնների վրայ իշխող պերճաւքի մէջ լողացող մեր ազգային բուրժուազիան: Միթէ նրա ներկայացուցիչները ընդունակ չեն մի աւելի ազնիւ գործի, մի աւելի պատւաւոր առաքելութեան, քան սուրթանին սեղանակցելը, արեան օրգիւններ վայելելը... Մինչև օրս նա վատաբար փախուստ էր տուլիս պայքարող երիտասարդութիւնից, մերժում էր նրան իր համակրանքն ու օգնութիւնը, պատրակելով «պայմանները», երկիւղը, անվստահութիւնը դէպի գործիչները: Այսօր սակայն վերացել են այդ պայմանները, սահմանադրութիւն է Տաճկաստանում, դուռը բացել է հայրենիքի, վերականգնել է և ազգային սահմանադրութիւնը, ժողովրդական պատրիարքը վերահաստատել է իր պաշտօնի մէջ: Եթէ ամսից ի վեր ժողովուրդը սպասում է, ահաբի բացեր կան լրացնելու վերաշինութեան, ազգային բազմակրթութեան վիթխարի աշխատանք կայ կատարելու արեան ու արցունքի հովիտներում, և որ ամենից ահաւորն է — սովը հնձում է Հայաստանի մանուկ սերունդը... Վայ արգեօք ազգերի կեանքում աւելի հանդիսաւոր մի վայրկեան, աւելի հրապուրիչ ու հրամայական մի առիթ՝ հոսեցնելու հարստութեան աղբիւրները, վեհանձնութեան թուխքներով ամօքելու թշուառութիւնը, ապրեցնելու կիսանահատակ, հաշմանդամ, միլիոնաւոր հարազատներին:

Բայց վեհանձնութեան այդ թափերը չեն տրւած հայկական բուրժուազիային: Այսօր նա նոյնն է ինչ որ երէկ էր — հայ մարտնչող բանակի գերմարդկային պայքարի ու չարչարանքի օրերուս: Նա դարձեալ թագնուում է, դարձեալ վատօրէն կճկուում իր ամրա-

կուռ սնդուկների շուրջը, երբեմն բրբեմն շարտելով ողորմելի գրօշներ՝ ի պատասխան աղիողորմ կոչերի...

Եւ 1908 թւականը միանգամ ևս, աւելի ուժգին քան երբեքից, շեշտեց տխուր, ճակատագրական փաստը — հայ աշխատաւոր ժողովրդի սրտաձմիկ մեռնակուցութիւնը: Մի անգամ ևս այդ ժողովուրդն զգաց որ իր ու «սողաքի» կուշտ, շահամուկաստայի միջև անդունդ է ձգւած և որ նա ինքը պիտի հոգայ իր ծով ցաւերը, պիտի հարթէ իր ճանապարհը անհնարին խոչընդոտների վրայից, յենւած իր սեփական ուժերի վրայ, իր գաղափարական տարրերի անձնազոհ գործակցութեան վրայ:

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքիոյ ներկայ բարենորոգչական շրջանին մէջ երբ կը մտածուի երկրի վարչութիւնը գնէլ բազմապիւրթ երկիրներուն վայել հիմքերու վրայ, ամենէն աւելի ուշագրութեան առնւելու է այն միջոցները, որ կը բարելուեն ազգաբնակչութեան տնտեսական վիճակը:

Վիթակաւ կարողութիւնն ու բարձրութիւնը հիմք է ամեն բանի: անկէ է որ խոշոր չափով կախուած է երկրի լուսաւորութիւնը, արհեստներու ու առևտուրի զարգացումը, պետութեան ուժն ու հմայքը:

Բաւական է յիշել, որ ամենահարուստ Անգլիան, Ամերիկան ու Գրանսան, միաժամանակ և ամենաբազմակրթութեաններն են մեծ պետութիւնների շարքում և ընդհակառակը Ռուսիան և Օսմ, երկիրը կը բռնեն վերջին տեղը, թէ հարստութեան, թէ լուսաւորութեան տեսակէտով: Սակայն աւելի դիւրին է ընդունիլ այս ճշմարտութիւնը, քան թէ որոշել այն միջոցները, որոնցմով ամենադիւրին կերպով կարելի է հասնիլ վերը յիշած նպատակին: Ազգաբնակչութեան բարեկեցութիւնը ապահովող ճանապարհները, անշուշտ, շատ և բազմապիսի են:

Ապահովութեան, կարգ ու կանոնի հաստատումը, խղճի, խօսքի, ժողովներու ազատութիւնները և ժողովրդապետութիւնը ապահովող օրէնքներու մշակումը, դատարաններու արդարացի, արագ և ձրի կերպով գործելը, հարկերու տանելի ըլլալն ու արդարացի դասաւորումը, ձեռնհաս ու ազնիւ պաշտօնեաներ ունենալը, ասոնք բոլորը կարեւոր են; իրականաւոր են և կ'ազգեն, հարկաւ, մեր կեանքի բարելաւման վրայ: Սակայն, այս բոլոր օրէնքներու ու փոփոխութիւններու ազգեցութիւնը մեծ չափով կապ ունի գործադրող մարդոց կամքին ու կարողութեանին: Եւ քանի որ մարդոց կարողութիւնը, ինչպէս և սովորութիւնները չեն կարող հիմնական փոփոխութեան ենթարկուիլ միանգամէն — մէկ թերևս տասը տարիներու ընթացքին մէջ — օրէնքներու բարեբար ազգեցութիւնը իրենց ամբողջութեան մէջ կ'արտայայտուի երկար տարիներէ յետոյ: Ահա թէ ինչու, ցանկալի օր է ն ք ն եր մ շ ա կ ե լ ու հետ միասին

երկրի իսկական վերածնունդի համար գործադրելու է այնպիսի միջոցներ, որոնք անկախ օրէնքն անհատներու կամ բնական և բնական արդիւնք տան միշտ, նոյնիսկ չար մարդոց ձեռքին մէջ: Այդպիսի օգտակար, արդիւնաւէտ, միմիայն բարին արտագործ միջոցների շարքին մէջ են ճանապարհները և մանաւանդ երկաթուղիները:

Մէկ կողմ թողունք Եւրոպան, ուր երկաթուղիներու երկարութիւնով ու շոգինաւերու մեծութիւնով կը չափուի ամեն մէկ պետութեան ուժը և յառաջդիմութիւնը: Նոյնիսկ Թիւրքիոյ մէջ փորձերը ցոյց կուտան, թէ ինչ հսկայական ազդեցութիւն ունին անոնք երկրի յառաջդիմութեան վրայ:

Ռուսիոյ, Պրուսիոյ, Այտրիոյ և Պէրսիոյ վիլայէթները որ օժտուած են երկաթուղիներով, վերջին տարիների ընթացքին մէջ ըրած են շատ խոշոր քայլեր դէպի առաջ: Անգլիոյ յառաջդիմութեան ուղի վրայ, անոնք ամեն տեսակէտով անհամեմատ աւելի բարձր են Անասոյլի շրջաններէն: Անոնք ունին ոչ միայն «երկաթէ գծի» ներկայացուցած ամեն տեսակի դիւրութիւններ, այլ և մեծ չափերով կ'օգտուին տնտեսապէս բաւական է յիշել, որ Բեռլինի Երթուղի, Էլզմիտի և Էնկիւրիի սանձակներու արմատներու տասանորդը (աշար) տար տարւայ ընթացքին մէջ (1889—90-էն մինչև 99—1900) կրկնապատկեր է՝ 130 հազար ոսկիէ բարձրանալով 250 հազարի:

Ըսել է որ իւրաքանչիւր տարի ազգաբնակչութիւնը կ'աւելցնէ իր ստացած եկամուտներն ու հարստութիւնը 5—7% -ով: Նոյնը տեղի ունի Սիւրիա և Մակեդոնիա բոլոր այն վայրերուն մէջ, ուր երկաթուղիներու միջոցով ժողովրդին հնարաւորութիւն կը տրուի արտահանել մթերքները երկրի խորքէն և այդպիսով աւելցնել մշակող հողերը կամ վերջինս մշակել աւելի մեծ խնամքով:

Հայկական շրջանները զուրկ են այս բոլոր առաւելութիւններէն: Հաղորդակցութեան միջոցները այստեղ կը գտնուին նախապատմական վիճակի մէջ: Տրապիզոնէն Կարին և Սամսոնէն Տիգրանակերտ տանող «կանոնաւոր» անւանեալ «խճուղիներն» իսկ տարւայ մեծ մասը անգործածելի են կառքերի համար: Երկրի ամբողջ տարածութեան վրայ հարկադրուած կը պահպանուի նահապետական ջորեպանութիւնը: Մէկ ձին ներկայիս մէջ 400—500 օխա ապրանք սայլով փոխադրելու տեղ, մէջքի վրայ բեռով նոյն վճարով կը տանի միայն 100 օխա: Ճամբորդը 100 քիլոմետր տարածութիւնը մէկ օրւայ տեղ կը կատարէ 3 օրւայ ընթացքին մէջ: Առատ տարիները երկրի խորքերուն մէջ պտուղները արժէքէ կ'իյնան, կը փտին, ցորենը կ'ոջրտի հորերուն մէջ և ընդհակառակը բնութեան ամենափոքր պատահարը կը բարձրացնէ գները, առաջ կը բերէ սով և մահ:

Շնորհիւ այս տխուր կացութեան երկրագործութիւնը, արհեստները, առևտուրը—հետևապէս և ամբողջ կեանքը—չի զարգանար երկրի այդ մասերուն մէջ: Ժողովուրդը հեռու կը մնայ եւրոպական բաղադրութիւնէն: Սահմանադրական ընթացքի առաջին քայլը պէտք է լինի արևելեան վիլայէթներուն յատկացնել այն դիւրութիւնները, որ ունին արդէն երկրի միւս նահանգները:

Թիւրքիոյ վիլայէթներէն շատերը կապուած են այսօր պետութեան միւս կեդրոններու հետ՝ երկաթուղիներով: Միւսները—ինչպէս Բաստէմունին, Մուսուլը կամ Պաղատար—ծովերու ու գետերու շնորհիւ հաղորդակցութեան ոչ պակաս յարմարութիւններ կը վայելեն շոգինաւերու միջոցով:

Չրային հաղորդակցութիւնէ և երկաթուղիներէ զուրկ կը մնան հայերով ու բարբերով բնակած վայրերը—Սվազ, Եսարբերգ, Տիգրանակերտ, Բիթլիս, Ան, Էրզրում: Այդ շրջաններու երկաթուղիով միացնելը Տրապիզոնի ու ծովի հետ կը բղխի երկրի կենսական պէտքերէն: սա պահանջ է արդարութեան և անհրաժեշտ օսմանեան կայսրութեան բարձրագոյն շահերու տեսակէտով:

Նոյնիսկ երկաթուղիներու դերը ամենէն աւելի կարևոր է ծովէն հեռու գտնուած երկրներու համար: Ծովային շրջաններու մէջ ջուրը ինքը (գետ կամ ծով) կը ներկայացնէ մի այնպիսի յարմար և աժան հաղորդակցութեան միջոց, որու հետ չէ կարող մրցիլ ոչ մի երկաթուղի:

Բաւական է յիշել, որ միւսնոյն քանակի ապրանքը նոյն արժէքով եթէ ծովով կարելի է փոխադրել 1000 քիլոմետր հեռու, երկաթուղիով հազիւ կարելի լինի միայն փոխադրել 100 քիլոմետր... Այդ է պատճառը որ ցամաքային Գերմանիան և Պելճիկան Անգլիայէն ու Հոլանդայէն համեմատաբար աւելի երկար երկաթուղային ցանց ունին: Ցամաքային Միացեալ Նահանգները, նոյնիսկ Ռուսիան արագորէն կը ծածկուին երկաթուղիներով: Թիւրքիոյ մէջ ևս ահնարեւ է, որ ծովէն ոչ հեռու անցնող գծերը—ինչպէս են Տէտէ-Աղաձի, Պոլսէն Սեյանիկ տանող, Գոնիայէն Էրէզլի—Ֆլաս կը բերեն և դեռ երկար ժամանակ այդ ֆլասով կը ծանրանան կառավարութեան սնդուկի վրայ: Նոյնը հաւանօրէն վերապահուած է և ծովէն ոչ հեռու անցնող Հիճազի գծին...

Հաւանաբար այդ բոլոր ծովէն ոչ հեռու անցնող գծերը երբէք չեն խաղար այն անտեսական դերը երկրի համար, չեն տար այն շահը, որ ապահովուած է ցամաքի խորքերը տանող «արևելեան», «Անասոյլի» կամ «Այտրի» գծերուն:

Հայաբնակ շրջաններու ներսերը անցնելիք գիծը արտահանութեան ու շահի տեսակէտով կը ներկայացնէ հաւանօրէն ատոր հակապատկերը: Ցորենի, պտուղներու, բամբակի և այլ բնական հարստութիւններով օժտուած այդ շրջանը այսօր ալ ամենակարևորներից մէկն է Թիւրքիոյ մէջ: Նա ունի աշխատասէր, համեմատաբար խիստ հողագործ ու այգեգործ ազգաբնակչութիւն, որ նոր աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը կրկնապատկէ իր եռանդը:

Հանքային հարստութիւնները այստեղ բազմապիսի են և անսահման: Անցեալին մէջ այդ հանքերը կեանք են տուած հզոր կայսրութիւններու: Այսօր անոնք կորած են և միմիայն երկաթուղու սուղոցը կրնայ գանոնք արթնցնել դարևոր քնից:

Եթէ Գոնիայի, Տորոսի և մայապոլում Հիճազի ու Միջագետքի ամառային շրջաններով անցնող երկաթուղիները տարին մի քանի հարիւր հազար ոսկի ֆլաս կը բերեն կառավարութեան, վստահ ենք թէ դէպի Եփրատի

շրջանները տանող գիծը կը ներկայացնէ բոլորովին այլ պատկեր: Օժտւած լինելով հաղորդակցութեան միջոցներով, կասկած չկայ, որ ազատութեան ու հաւասարութեան ըէժիմի տակ ամեն մէկ 10—15 տարին կը կրկնապատկէ թէ իր եկամուտը, թէ պետութեան տւած օժանդակութիւնը:

Քացի այդ, օտար երկաթուղային ընկերութիւններու կրած վնասը ապահովելու համար, օսմանեան պետութիւնը մինչև օրս *garantie*-ներու (երաշխաւորութիւն) կամ այլ ձևերով, վճարած է օտարներուն 12 միլիօն ոսկի գումար, որ բարդ տոկոսներով ժողովրդին վրայ ծանրացած է կրկնակի բեռով: Վերջին տարիները *garantie*-ի ծախքը բարձրացած է տարին 830,000 ոսկիի:

Այդ ընդհանուր և տարեկան տուրքի մէջ հաւասար չափով մաս ունին երկրի բոլոր բնակիչները, հետևապէս և հայկական շրջանները: Միջին հաշուով ամեն մէկ ընտանիք երկաթուղիներու համար իր գրպանէն մինչև օրս վճարած է 3 ոսկի և տարին կուտայ մինչև մէկ մէճիտիէ: Տոկոսներու հետ միասին դա կը կազմէ ամեն մէկ ընտանիքի վրայ 5—6 ոսկի, իսկ ամբողջ մեր 4 միլիօն բնակիչ ունեցող շրջանի համար 3 1/2—4 միլ. ոսկի գումար: Եւ այդ գումարները հայկական շրջանների ազգաբնակչութիւնը վճարած է իր աղքատ գրպաններէ, կտրելով կերած չոր հացէն, որպէսզի այլ աւելի հարուստ շրջաններ օգտուին երկաթուղու ներկայացուցած բարիքներէն...

Արդ, եթէ ընդհանուր պէտքերի համար հոգ տանող կառավարութիւնը անցեալին մէջ պէտք դատած է պետութեան գանձարանէն (այսինքն ընդհանրութեան գրպանէն) մեծ ծախքեր ընել ծովի ափին գտնուող կամ ծովին աւելի մօտիկ, աւելի բաղաբաղկալի ու աւելի բարեկեցիկ շրջանների համար, միթէ նոյն պարտականութիւնը չպիտի զգայ ան դէպի մի շրջան, որ ամենայնտանապէս է այսօր երկրի մէջ, ամենաանկիրթ ու ժեր պարունակողը, բայց և ամենէն մեծ ապագայ խոստացողը: Ամեն մի անաչառ անձ կրնայ այդ հարցին տալ միայն դրական պատասխան:

Վերջապէս հայ, բիւրդ, թիւրք ազգերով բնակած այդ շրջանը 20 տարիէ ի վեր ենթակայ է արտակարգ ճնշող ըէժիմի, հալածանքի, եղբայրասպան ընդհարումներու: Մէկ ամբողջ սերունդի ընթացքին մէջ այդ երկիրը վայրենացեր է, երկրագործը զրկւեր է հողէ, եզէ, գործիքներէ, հերկուող հողերը մնացեր են խոպան, հողագործութեան տեղ բռնել է խաշնարածութիւնը: Առաջ ընթանալու տեղ մենք դէպի ետ ենք գնացած... Սովը այսօր կայնած է հարիւր հազարաւոր մարդոց դռան առաջ: Եւ քանի որ այդ սովը հետեանք չէ երաշտի, մորեխի կամ կարկտի, այլ ամայացման, տընտեսական քայքայման ամբողջ մի սիստեմի — սովը կը շարունակուի տարիներ: Հացի գներու բարձրացումը, մարդոց հարիւրներով ուժասպառելը կը շարունակուի մինչև որ երկրի տնտեսական կացութեան մէջ չը մտցուի հիմնական փոփոխութիւն:

Եւ վարչական բարեփոխութեան և հարկերի թեթեւացման հետ միասին ինչ կրնայ աւելի լուրջ և աւելի հիմնական լինել քան երկաթուղիներու կառուցումը: Վերջինս է որ ուժգին զարկ կուտայ երկրի

տնտեսական վերաշինութեան, երկաթուղիի նման հասարակական մեծ աշխատանքներն են միայն որ գործ և հաց կուտան տանեակ հազար անգործ ու սոված ձեռքերուն:

Այս ամենուն աւելցնելու է նաև այն պարագան, որ մեր յիշած հեռուոր հայկական շրջանը ամենէն անպաշտպան է պետութեան ապահովութեան տեսակէտէ: Պատերազմի դէպքում եթէ ծովի վրայով հաղորդակցութիւնը դադրի, կովկասի ու հարաւային Առևտրային կառավարութիւնը շնորհիւ Արարի քծին, երկու շաբաթուայ մէջ կրնայ 2 բանակ զօր իջեցնել Էրզրումի սահմանը, այն ինչ Էնկիւրիի ու Մուսուլի վրայով առաջ խաղացող օսմանեան զօրքերը հազիւ 2—3 ամիսներու ընթացքին մէջ կը հասնին Էրզրում: Ահնար է որ երկաթուղին միայն կարող է ամրապնդել օսմանեան պետութեան միութիւնը և պաշտպանութիւնը, կասկած չկայ, անշուշտ, որ երկաթուղի կառուցանելու հարցը դէպի Կիրատեան շրջանը համարելու է էն կարևորը և էն հասունցածը մեր առաջ դրւած բոլոր գործնական բնօրթ ունեցող հարցերէն:

Չենք կարող այստեղ գանց ընել այն բացառիկ վնասակար ուղղութիւնը, որ ստեղծւած է Թիւրքիայի մէջ *garantie*-ներու առաւելեալ սիստեմով, երկաթուղային ընկերութիւններու շահի ապահովութեամբ պետութեան կողմէ: Ապահոված որ իրենց ծախսւած գումարը տալու է որոշ տոկոս, ամեն պարագայի մէջ երկաթուղիներու ընկերութիւնները հոգ չեն տանիր գծերու յարմարութիւններու, փոխադրութեան աժանութեան, եկամուտներու աւելցնելու մասին: Միև կողմէ պետութիւնը ի հատուցումն «ընկերութիւններու» կրած վնասներու կը վճարէ տարին 7 — 800,000 ոսկի: Քայց արդեօք այդչափ աննպաստ տնտեսական պայմաններու մէջ կը գտնուին երկաթուղիները, արդեօք անհրաժեշտ է որպէսզի երկաթուղիներու կառուցումը յանձնուի օտարներու: Երաշխաւորութիւն չունեցող Այտընի գծի յաջողակ գործունէութիւնը և Հիճազի ձեռնարկի վերջացնելը պետութեան հոգատարութեամբ կը թելագրէ մեզ յուսալ, որ ապագայում կառուցելիք երկաթուղային գծերը ևս կարող և պէտք են յատուկ պարտքով չը ծանրանալ պետութեան գանձարանի վրայ:

Առաջին տարիներուն սպասելիք բնական պակասը *garantie*-ի տեղ կարելի է լրացնել այլ ճանապարհներով:

ա) Աւելցնել մաքսը նոյն շրջաններում գտնւած նաւահանգիստներու մէջ:

բ) Կառուցանող ընկերութիւններուն որոշ պայմաններով տալ նաև շրջանին մէջ գտնւած հանքերու ռազմականութիւնը:

գ) Գերմանիայի նման յատուկ տուրք նշանակել այն հողերու վրայ, որոնք գտնւելով երկաթուղու գծի մօտ անհամեմատ աւելի մեծ չափով կ'օգտուին անոր բարիքներէն:

դ) Ի դէպ, Հայաստանի խորքերը գացող գծերի նկատմամբ աւելացնել նաև այն պարագան, որ այդ երկիրը ամենայն իրաւամբ իրաւունք ունի պահանջելու վերադարձնել Կիրատեան շրջանին այն 3 1/2—4 միլ. ոսկին, որ այդ երկրի ազգաբնակչութիւնը անցեալին մէջ

վճարած է միւս շրջաններուն երկաթուղիները. ապահովելու համար:

Հարցի ամենագլխաւոր կողմը, ֆինանսականը, կարելի է այսպիսով ապահոված համարել: Անացածը դիւրին է և մասնագէտներու գործ: Հայաստանի խորքերը տանող երկաթուղին կը լինի սովորական լայն ուղիով, թէև լեռնային երկիրներուն աւելի նպատակաւորմար է նեղ գիծ: Կ'ունենայ նա հ ա մ ե մ ա տ ա կ ա ն ս ո վ ո թ ա կ ա ն տ ա ր ի ֆ, թէ՛ Հունգարիայի, Ռուսիայի ու Գերմանիայի նման հողագործական երկիրներուն աւելի յարմար դիֆերենսիալ (երբ վճարը կ'իջնէ հեռավորութեան համեմատ) պէտք կը համարուի՝ արդեօք մէկ կամ մի քանի գծեր, Սամսոնէն, Տրապիզոնէն թէ մի այլ տեղէ սկսող ատոնք բոլորը երկրորդական հարցեր են: Կարևորը սա է որ դէպի Եփրատի սկունքները տանող երկաթուղիներու կառուցման հարցը համարելու է հերթական և անյետաձգելի:

Ատոր մասին խորհելու է թէ կառավարութիւնը, թէ պարլամենտը, թէ մանաւանդ ինքը ժողովուրդը գտնելով որ շոգեմեքենայի ամեն մի սուլոց հաւասար է ազատութեան ու արդարութեան մասին արտասանող գեղեցիկ ճառի, որ երկաթէ գծի ամեն մէկ քիւրմետրը արժէ մի դպրոց, դպրոց որ կը ծառայէ հասարակութեան բոլոր խաւերուն առանց լեզուի, կրօնի, դասի սեռի և հասակի խտրութեան:

Գիտակցելով, որ ծովէն հասնող ամեն մի լեցւած գնացք համահասար է ժողովրդի եկամուտի ու հարստութեան: աւելնալուն հազարաւոր ոսկիներով:

Որ Եփրատի գիծը կ'ապահովէ Թիւրքիոյ ամբողջութիւնը, կ'ամրապնդէ միութիւնը և ապահովութիւնը:

Վերջապէս, համոզւած լինելով, որ յայտարարած ճշմարտութիւնները մեր երկրում կեանքի մէջ կ'իրականան ամենէն աւելի երկաթի գծի միջամտութեամբ, երկաթի, որ արիւն հոսեցնելու տեղ կը վերացնէ նախապաշարումները, կ'եռացնէ աշխատանք և կեանք:

Գիտնալով այս ամենը՝ ջանալու է բոլոր միջոցներով առաջ մղել երկաթուղիներու կառուցման հարցը դէպի հայկական շրջանները:

Թող ժողովուրդը պահանջներ դնէ այդ մասին իր ժողովներու ու դիմումներուն մէջ:

Թող պատգամաւորները լուրջ կերպով զբաղին այդ հարցով և իրենց ձայնը բարձրացնեն այդ կենսական ձեռնարկի համար:

Թող սահմանադրական կառավարութիւնը գտնելի իր պարտաճանաչութեան վրայ և տայ հայկական նահանգներուն այն, ինչ որ վերջինիս պէտքը և իրաւունքն է:

յերուն: Առնային տեղերու հայ գիւղերը միայն համեմատաբար ինքնութիւնին պահած են:

Արթութիւնը և ասումը հողագործ ժողովրդի մարքին մէջ քիչ տեղ դրած է: Տարեկան հողու վեց ամիս միայն աշակերտները դպրոց կը յաճախեն, դաշտային աշխատանքները սխալուն ամենքն ալ կը ցուին և գիտցածնին ալ կը լուսնան:

Գպրոցները կարգ կանոն չունին, ամեն աշակերտ խառնի-խառն ինչ գիրք որ գտնէ հօրենական տունը՝ իբր դասագիրք կը դարձած է, այնպէս որ, եթէ կարելի է այսպէս ըսել գրքերու սյուզանութեան պատճառով ամենմէկ աշակերտ «գասարան» մը կը ներկայացնէ: Ամենայուրի սովորութիւն մըն է նաև ամեն տարի դասատու փոխելը:

Իգական սեռի դաստիարակութիւնը բնաւ չկայ և կիները մարդոց հասարակ լուծւած են ամեն տեսակ շարքաշ աշխատանքի:

Գիւղացին բազմանալու ընդունակ է: 18—24 տարեկան կ'ամուսնանան. ամուսիններ հազարապիսակ են, և եթէ կան, սնոր ալ պատճառը պաշտօնի յոռի սովորութիւնն է, և կան մարդիկ որ իսկապէս անկարող են 2—7 սակին վճարել:

50—60 տարիէ ի վեր շատ մը գիւղեր քառապատկած են: Հին ծերունիները կը կազմեն կենդանի սոմարները: Գիւղացու այսօրինակ բազմանալով վարելահողերը կ'անբաւականան, ուստի շատ ընտանիքներ, ապրելու համար, 6—7 էշ կը պահեն և կը շահագործեն փոխադրութիւններ ընելով Զիլէ, Ամասիա, Մարաշ, Սամսոն և մինչև Մէրսին:

Արհեստները, ինչպէս երկաթագործութիւն, հիւնութիւն, կոշիկարութիւն, կիներու կիսկատար ստայնանկութիւն, նախնական վիճակին մէջ են և մարդիկ իրենց հասարակ պէտքերէն աւելի բաներու չեն ձգտիր:

Տեղին վրայ առիչգոյէ աշխատանքի, շատ երիտասարդներ հեռու տեղեր կերթան խճուղիներու, երկաթուղիի ճամբաներու վրայ բանելու կամ ագարակատերերու մօտ «սքոր» կերթան տարեկան 7—12 սակով: Հողորդակցութիւնն միջոցներ և քանի մը գործարաններ մեծ բարիք մը պիտի բլլային պօզուքցիներու համար: Գարնալըբզի մօտ շինւած նոր ոճով ալիւրի գործարանը մը օրհնութիւն մը եղաւ տեղացիներուն, որոնք զրեթէ պարտքերէ ազատած են:

Երկրագործութիւնը նախնական միջոցներով կը կատարուի, աւանդական լուծէն, եղէն, արօքէն ու խոփէն մազի չափ չեն շեղած: Գիւղացին կ'պած է եղին, փոխանակ ձի գործածելու, որ աւելի ձեռնտու է, և ինքն ալ եղի պէս դանդաղաբարձ եղած է:

Քանի տարիներէ ի վեր Ռուսիայէն գալոված ու հոս հաստատուած չէրքէզները, շնորհիւ կառավարական լիաշնորհութեանց, հարստանալով եղած են վաշխառու վաճառականներ և ամուսկան հարիւրին 5—6 փոխ կուտան տուրքի համար նեղած գիւղացուն և տոկոսը ամսէ ամիս կանխիկ կը գանձեն:

Ապառիկ մթերք տալու սովորութիւնը կար 10—12 տարի առաջ, այժմ բոլորովին վերջած է ի վնաս գիւղացուն:

Պօզուքի դաշտը կամ շրջանը նշանաւոր է իր բարեբերութիւնով: Յաճախ տեսնուած է որ երբ շրջակայ նահանգները սով պատահած է, Պօզուքի դաշտը օգնութեան հասած է: Ասկէ քանի մը տարի առաջ ցորենի զրիւք (մօտ 6 օխայ) տեղին վրայ կը ծախւէր 25 փարայի, իսկ փոխադրութեան ծախքն այ հաշուելով դէպի շրջակայ մեծ քաղաքները 40 փարայի կուգար:

ՊՕԶՈՒՔԻ ՀՍՅ ԳԻՒՂԵՐԸ

Պօզուք կեսարիոյ և Եօզդատի միջև 15 ժամ լայն և 20 ժամ երկայն տարածութեան մը վրայ կը գտնուի և կը պարունակէ, ի միջի այլոց, մօտ 40 հայ և հայ-թրքախառն գիւղեր:

Թրքախառն գիւղերու հայերը ինկած վիճակ ունին և մայրենի լեզունին գրեթէ կորսնցուցած են: Թիւրքերը աւելի հարուստ, և մանաւանդ բռնապետական ընթացիմի օրով իրենց ձեռք բերած ազդեցութեան շնորհիւ, կը անրապետեն հա-

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ա Ջ Ե Ք

Այդ քստմենի դաւաճանի անձնաւորութեամբ զբաղւում են այսօր ամբողջ համաշխարհային մամուլը և միջազգային յեղափոխական կուսակցութիւնները: 1904

Թւի հոկտեմբերեան ժողովին նա ևս ներկայ էր,—այդ անդրանիկ Խորհրդաժողովին, ուր առաջին անգամը Ռուսաստանի դիմադրական ու սօցիալիստ, յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչները համալսմբել էին խորհելու համար ընդհանուր, համերաշխ գործակցութեան միջոցներ: Այդտեղ էին ռուսական կազմերի ամենահեղինակաւոր պարագլուխները, լեհական երկու խոշոր հատուածները, Ֆիլիշանգալը, լատիշները, Լ. Յ. Գաշնակցութեան և վրացական ֆէդերալիստների պատգամաւորները: Ո՞վ կարող էր կարծել թէ այդ կոնգրէսում, որ գումարել էր յեղափոխական փոթորիկների նախօրեակին, ամենախիստ գաղտնապահ հուստեան պայմանով հսկում էր դաւաճանի սրտտես աչքը... Ազգեֆ ներկայ էր բոլոր նիստերին, իր մի ուրիշ կուսակցի հետ, ներկայացնելով Ռուսաստանի սօցիալիստ-յեղափոխականներին, որոնց հոգակը տարածել էր արդէն նոր կատարած Պէլզէի մահափորձով: Բայց սոսիական կարծակալը չէր խօսում: Համար ու անշարժ նստած էր նա մի ամբողջ շաբաթ, իր հսկայ ու գարշելի մարմնով, անասնական հրող կերպարանով: Բոլորի համար մի առեղծած էր այդ ահագին մոմիան... Մի անգամ միայն, երբ յեղափոխականների անձուկ շրջանում խօսք բացեց Կովկասում ձեռնարկելիք քայլերի մասին, — Ազգեֆ միջամտեց և մի տարօրինակ, անկապ լեզուով իր մարտական հրահանգներն էր տալիս «Գաշնակցութեան» պատգամաւորին... Մնացած ժամանակը լուռ մնաց և անտարակոյս զբաղւած էր միայն նրանով որ ըստ կարելոյն շուտ տեղեկագրէր Վետերբուրգի կառավարութեանը իր կատարած հետազոտութիւնները և նշանաւոր գաղտնիքը *):

Ազգերի յեղափոխական տարեգրութիւնների մէջ, անշուշտ, եզակի է դաւաճանութեան այս սարսափելի դէպքը. դժուար թէ որեւէ այլ երկրում, որեւէ այլ պարագայում, դաւաճանը կարողացած լինի այնքան երկար տարիների ընթացքում շարունակել իր երկդիմի դաշտօնը, գրաւելով միաժամանակ առաջնակարգ, միահեծան դիրք երկու երկրէն թշնամի բանակներում— մի կողմից յեղափոխականների, միւս կողմից արիւնարբու ժանդարմների մէջ: Յարիզը՝ իր դիւային հնարքներով գերազանցեց, կարելի է ասել, պատմութեան բոլոր բնաւոր ուժերից...

Գուհիկ մասնիչի դիմակը պատուեց, թէև, դժբախտաբար խիստ ուշ... Պէտք է երախտագէտ լինել այն մի քանի գործիչներին, որոնք ազատեցին սօցիալիստ-յեղափոխական կուսակցութիւնը և ամբողջ Ռուսաստանը մի այդպիսի հոյակապ ու վտանգաւոր չարագործից: Ազգեֆի դերի գլխաւոր մերկացնողն է հին նշանաւոր յեղափոխական Բուրցեվ, որին մեծապէս օգնել է իր ջանքերից փաստերով օխրանայի նախկին գործակալ Սիբիրից փախած (ու այժմ սօցիալիստ-յեղափոխական) Միխայիլ Բակայ, որ այսօր Պարիզի *Matin*-ում

*) Թերեւս այդ խոտը մասնութեամբ պիտի բացատրի մասամբ այն անհաս բեւախոքիւնն ու հալածանքը, որ մղում է ռեակցիան սկզբից ի վեր նաև ռուսական կաղէսների դէմ... Այսօր արդէն Ռուսաստանում հռչակւած է այն իրողութիւնը, որ 1904-ի պարիզեան առաջին յեղափոխական կոնգրէսով ընկալուած հալածանքի և ինքի Միխայիլի և այլոց կողմէն մասնաւոր ուղղում է այդ առթիւ ու դաս է պահանջում կաղէսների առաջնորդի դէմ...

հրատարակում է: ուշագրաւ ու արտեղծացիչ պատմութիւններ ռուսական գաղտնի սոսիականութեան բարբերից: Բայց որ ամենից արտառոցն է,— այդ անօրինակ գործի մէջ դաւաճանի մերկացումներով ու իր «յեղափոխական համակրութիւններով» կասկածուած է այսօր մի այնպիսի մարդ, ինչպէս Լ. օ. պ. ու խ. ի. ն., Ռուսաստանի նախկին գաղտնի սոսիականութեան ամենագոր հրամանատարը: Նա արդէն բանան է ներուած: Մինչդեռ Ազգեֆը պահանջ չըլում է... դուրս է հանց ռուսական սոսիականութեան թմբի տակ:

Նեղիւնը ընկած անբոլոր սկանդալից ցարի կառավարութիւնը ուրիշ ելք չը գտաւ: Բայց եթէ արդարացման վկայական տալ սոսիական յեղափոխականին: Մտօրիպին, ի պատասխան ձախակողմի հարցապնդման ու յարձակումների, մի երկար ու ողորմելի պատճառաբանութեամբ, յայտնեց, թէ կառավարութեան համար հաստատուած չէ Ազգեֆի մասնակցութիւնը Պէլզէի մեծ իշխան Աերդիի և այլոց մահափորձերում... Մինչդեռ այդ մասնակցութեան մասին վկայում է ինքը Ազգեֆը, սօց-յեղափոխականների կենտրոնին ուղղած իր նամակներում որոնք կարգաւեցին դուրսի ամբիճից...

Այդ մութ գործը դեռ կը շարունակէ յուզել հանրային կարծիքը:

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՀՈՍԱՆՔԸ

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ (ՍԻՆՏԻԿԱԼԻՉՄ *)

II

«Պարլամենտական գործունէութիւնը արժէք չունի. ժողովրդական ձայնատուութիւն, ընտրողական քէներ, բանուրական օրէնսդրութիւն, ընթացիկ և այլն — այդ բոլորը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ՝ աշխատաւոր դասակարգերի վերջնական ազատագրութեան համար»... Այսպէս են յայտարարում Նոր հասանքի մշտնադատաւորները:

Այդտեղ ևս նրանք շարաշար մեղանշում են ճիշտ է, անշուշտ, որ բանուրական ընթացիկները որքան էլ նրանք դրած լինին լայն, մարդասիրական հիմքերի վրայ, չեն կարող այնուամենայնիւ հիմնականապէս փոփոխել ժամանակակից հասարակութեան էսէթիկը, որ ամուր խարսխած է կապիտալիստական մասնաւոր սեփականութեան ու լուրջ արատաւոր սկզբունքի վրայ: Նրանք չեն կարող ազատագրել աշխատանքը, չեն կարող լուծել դասակարգերի անհավասարութիւնը: Ասպիտայի շահագործումներն ու աշխատաւոր զանգուածների թշնամութիւնը կը շարունակեն, իբրև մի տխուր, ճակատագրական իրողութիւն և նրանք վերջ կ'առնեն միայն այն ժամանակ, երբ ինքը պրօլետարիատը իր ձեռքը կ'առնէ քաղաքական ղեկը, երբ նրա ձեռքով կը յեղաշրջի սեփականութեան հաստատութիւնը, երբ արդիւնաբերութեան բոլոր գործիքներն ու միջոցները— հող ու հանքեր, գործարարներ ու մեքենաներ— կը դրին ամբողջ հասարակութեան, ամբողջ աշխատաւոր համայնքի արամագրութեան տակ, իբրև կօլլեքտիվ համակարգի սեփականութիւն (collectivisme), կամ, ուրիշ խօսքով, երբ իւրաքանչիւր մի աշխատող անհատ բացարձակապէս կը լինի իր աշխատանքի բոլոր արդիւնքի:

Ընթացիկները ներկայ կարգերում չեն կարող

*) Տես «Գրոսկի» № 11—12:

սահմանափակել կապիտալի շահագործման պատուհանները, կրճատել բանւորական աշխատամիջոցը, բարձրացնել օրու վարձը, ապահովել ծերունիներին, կանանց ու երեխաներին, բոլոր թողլերին, գոյութեան կուրի բոլոր գոհերին, ստեղծել մարգավայել կեանք պրոլետարիատի ու հարստահարած գիւղացիութեան համար:

Այդ բոլոր թեֆորմներն իրագործելու համար անհրաժեշտ է, անշուշտ, բուն աշխատաւորութեան մասային ու յարատե կազմակերպումն ու պայքարը յաճախ զուտ անտեսուական հող վրայ, բայց նոյնքան անհրաժեշտ է և նրա ներկայացուցիչներին — սօցիալիստական կուսակցութիւններին — քաղաքական կուրի բոլոր, կամ ուրիշ խաբույժ պարլամենտարիզմը, որ բացատրում են նոր, սինդիկալիստները: Այդ հող վրայ աշխատաւորներն ներկայացուցիչները յաճախ համերաշխութեան ձեռք են մեկնում բուրժուազային ձախակողման, առաւելագոյն դեմոկրատտարբերին և ընդհանուր միայած կուսով չեզոքացնում են բեկցիկային հակադարձութիւնը: Առդէն նախորդ յոգեւորներին մէջ մենք յոյց ենք տեսել թէ նրան անմիառարարութեան համար փակել մի անհատ, կողիացած դիմադրութեան մէջ, անհատուել իսպառ սօցիալական միջավայրից և կուրի բոլոր մի միջոց է դէպի իդեալը — դարձնել միակ ու գերագոյն նպատակ:

Աշխատաւոր ընդհանրութեան համար ծանրակշիւ կարևորութիւն սկսի և այն քաղաքական կուրի, որ նա ինքն է մղում, ուղղակի և գանգաւորութեամբ պարլամենտական, յնարաւորական պայքարների միջոցին: Սինդիկալիզմը արհամարհանքով է խօսում ընտրական քէներին մասին և նրա մղելու անդիատաւորաներից մինը, Գիւստաւ Երվէ, Շուտաբարտի միջոցային սօցիալիստական կոնգրեսին մէջ հանդիսաւոր նախատիւք էր չարտում գերմանական սօցիալ-դեմոկրատիայի դէմ, որ նա անւանում էր լոկ քէներին մի շտեմարան, յամատուրքերի մի անհատի դրամարկը: Ճշմարտութիւն կայ, անշուշտ, սինդիկալիստական քննադատութեան մէջ, երբ նա հանրային ուշադրութեանն է մասնում այն քաղաքական անշարժ ու թիւնը, որին վաղուց ի վեր մատնւած է Գերմանիայի լայնատարած սօցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը և այդ հանդամանքը առանձնապէս շեշտուեց վերջին հանդիսաւոր, պատմական վայրկեանում, երբ Արիճել: Ա-ի աղաղակով վերադառնալի շնորհիւ երկիրը բաւականաչափ յուզել էր և հարց էր ծագել վերաքննելու սահմանադրութիւնը, հաստատելու իսկական ժողովրդական գերիշխանութիւն:

Սակայն չը պէտք չափազանցնել յարձակողական տենդը և ուրանալ թիւն, քանակի այն հզոր ուժը, որ ունի գերմանական սօցիալիզմը: Երբ քաղաքական և քաղաքական ընտրող դիտակից քաղաքացիներ, որոնք կանգնած են այդ երկրում սօցիալիստական գրոշակի տակ — բնաւ չեն ներկայացնում արհամարհելի մի քանակութիւն: Միշտ աւելի և աւելի աճելով իր թիւով ու որակով, գաղափարական կուր, անասան կարգապահութեամբ այդ մեծ բանակը, որի նմանը չունի Գերմանիայի ոչ մի ուրիշ կուսակցութիւն — մի անհոյստ է կուսակցութիւնների և բոլոր իշխող դատակարգերի համար, մի յարաճուն սպառնալիք, չը նայած յերափոխական իր խառնածքի թուլութեան ու իր շարժման դանդաղութեան:

Ընդհանուր ընտրողական իրաւունքը և ընտրական պայքարները, որոնց վրայ այնքան բարձրից են նայում սինդիկալիզմի միլիտանտները, — մի հսկայական մարզաբան են աշխատաւոր դատակարգերի ու սօցիալիզմի համար: Յանցանք կը լինէր, եթէ նրանք չօգտուէին աւանդաբարութեան այն սքանչելի նւառումից, որի անունն է ժողովրդական ընդհանրական քաղաքականութիւն և որ ներկայացնում է կուրի, մրցութեան մի գերագոյնը: Տղա Նո սօցիալիստական կուսակցութիւնները բոլոր երկրներում ձգտում են շահագործել ըստ կարելոյն լայն չափերով պրօպագանդի այդ մասնաւանդ մեծ գործիքը, որի շնորհիւ նրանք աշխոյժ են շարժել հաւաքել սօցիալիզմի գրոշակի տակ ոչ միայն գործա-

րանական պրօլետարիատին, այլ և յաճախ ազգաբնակչութեան ուրիշ խաւեր — արհեստաւորութիւն, մանր վաճառականութիւն, մանր գիւղացիութիւն, մտաւորականութիւն — որոնք բոլորն էլ այս կամ այն ձևով տառապում են կապիտալիզմի անիրաւ կարգերի հետեանքներից: Սօցիալիզմը ձգտում է կատարելագործել դեմոկրատիզմի պարզեւած գործիքը — ընդհանուր ընտրողական իրաւունքը, ձգտում է դարձնել այն իրօք ընդհանրական, տարածւած մարդկութեան երկու սեռի վրայ հիմնւած աւելի դատողութեան ու արդարութեան սկզբունքի վրայ: Այդ մտքով է, որ ներկայումս սօցիալիստական կուսակցութիւնները ամենուրեք ընդունել են իբրև նշանաբան համեմատական ներկայացուցչական կուսակցութեան սկզբունքը (Representation proportionnelle), որի կիրառութեամբ իւրաքանչիւր մի քաղաքական կուսակցութիւն այնքան աւելի ներկայացուցիչներ պիտի ունենայ պարլամենտում, որքան աւելի համախոհներ ունի երկրի մէջ կուսակցութիւնները, հետեւաբար, պիտի հանդէս գան ազգային պատկաւաւորական ժողովներում իրենց իսկական կերպարաքով: Իրենց անխարդախ լիակատարութեամբ, պարլամենտները պիտի ներկայացնեն երկրի ճշմարիտ պատկերը, կուսակցական ուժերի ու նրանց փոխադարձ յարաբերութիւնների: Չենք հայելին, — և այն ժամանակ սօցիալիզմը քաղաքակրթութեամբ աշխարհի պարլամենտներում պիտի ետապատկէ ու քառապատկէ իր ընտրեալների քանակը, այն ժամանակ գեր անական սօցիալ-դեմոկրատիան, ի տեղի 43 պատգամաւորի պիտի ունենայ — իր 3,500,000 ընտրող ձայների համապատասխան — մօտ երրորդ մասը Ռայխստագի ամբողջ պատգամաւորութեան:

Եւ սօցիալիզմը օգտուում է ընդհանուր ձայնատուութեան սկզբունքից ոչ միայն պարլամենտների, բարձրագոյն օրէնսդիր ժողովների համար, այլ և այն բոլոր հաստատութիւնների, որոնք մէջ նա ուզում է բուն դնել իր քաղաքակրթիչ ու պատարար գոծունէութիւնը մղելու համար: Սօցիալիզմը ձգտում է, օրինակ, նւաճել քաղաքային խորհրդարանները (Conseils municipaux) և այդ նպատակով եռանդուն մասնակցութիւն են զոյց տալիս ամեն անգամ քաղաքացիական ընտրութիւնների մէջ. տասնեակ տարիների յամառ պայքարի շնորհիւ, այսօր Ֆրանսիայում մի շարք քաղաքներ սօցիալիզմի դիրկն են անցել սօցիալիստ են նրանց խորհրդարանների ճշտող մեծամասնութիւնները, որոնք յատուկ օրէնքներ են մշակում քաղաքների ներքին բարեկարգութեան համար, սօցիալիստ են և քաղաքացիականները, որոնք կուսած են ի կատար անելու այդ օրէնքները, վերահսկելու այդ բարեկարգութեան ու հանրային խաղաղութեան վրայ:

Այդ համատարած պրօպագանդը և այդ յամառ ու կրօնի արշաւանքը դէպի բուրժուական հասարակութեան ամբախուր բերդերը — դա մի փաստ է, որի անհատական կարևորութիւնը անհասկնալի է ժխտել լուրջ բանաւոր պատճառաբանութեամբ: Այդ արշաւանքով, ընտրողական իրաւունքի այդ բուն ու սխտեմատիկ շահագործումով սօցիալիզմը, ինչպէս մասամբ շեշտեցինք նախորդ էջերում, հետամտում է երկու նպատակի. նա որոշ չափով գոհացում է տալիս բազմատանջ աշխատաւորութեան պահանջներին՝ արդէն ներկայումս նա կուսում է միաժամանակ իր լեզուները՝ հանդէպ պապային նա հետզհետե ստեղծարարում է իր բանակը, կազմակերպում է ու դատարարակում իր ջիւղ ու վեհ իդեալի դարձնել մէջ և անպարտելի շարքերով տանում է նրան դէպի դաւոց մեծ պատերազմը — ամենամեծ ու ամենավեհ ճակատաբար, որի նմանը աշխարհը չի տեսել և որի մէջ աշխատաւոր ընդհանրութիւնը, գոյութեան դարաւոր մեծամարտի այդ դժգոհած, արեւնշաղխ գոհը, պիտի կորցնէ վերջապէս իր մարմնի, խղճի ու մտքի վրայ ծանրացած բոլոր շղթաները:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԳԵՐ

ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ

Համատարած բեկաղիան օրեցօր աւելի ու աւելի ուժեղանում է:

Բռնակալական սանձարձակութիւնը այլևս ոչ մի չափ ու սահման չէ ճանաչում:

Բիւրօկրատիան չը տեսնած համարձակութեամբ շարունակում է սարսափների քաղաքականութիւնը:

Ամբողջ երկիրը բաժանած ունենալով առանձին ստորապրովիւնների՝ զինուորական զենքերով նահանգապետութիւնների, նա ահաբեկել է ազգաբնակչութիւնը բանտերով, սքտորով ու կախաղաններով:

Նա իր հովանաւորութեան տակ է վերցրել բոլոր մութ ուժերի, որոնք ուն ազգաւանների նման կռանչում են աջ ու ձախ՝

— Արիւն... աւերածութիւն...

Եւ տեքում է ողջ Ռուսաստանը դարիզմի ծանր լծի տակ: Բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ այդ լուծը ամենից աւելի դաժանօրէն սեղմում է ծայրագուստները:

Ֆինլանդիան, Ղեհաստան ու Արվիաս նորից դարձել են քաղաքական նոխարներ, որոնց դիւսին հրեշտակը դաւեր են ծրագրում ու նիզակներ ծօծւում:

Եւ համապետական այդ դժոխային պայմաններում, ընդհանուր ծայրագուստային այդ անդուսպ հայրամայների մթնոլորտում նորից գլուխ է բարձրացրել հայակեր, հայաստանահայ քաղաքականութիւնը իր բոլոր արտայայտութիւններով:

Ամենայնամայն գուստներից սկսած, մինչև Արվիասի մայրաքաղաք Թիֆլիսը, լին են բանաբեր հազարաւոր անմեղ զոհերով, դառն արցունք են քամում անթիւ բնամիրքներ, իրենց կերակրող ձեռքերից զրկւած: Հալ ու մաշ են լինում հարկւրակները հեռու, ցրտաշունչ աքտորավայրերում: Արևանդեթիկի մինչև Աեռասիկա-Սիբիր:

Նոյն իսկ այս վերջին օրերին, երբ Արվիասի բոլոր ծայրերից հըս հպատակութեան ձայներ են հնչում ընդդէմ Պուրիշկեիչեան զրպարտութիւնների, բռնակալ դարիզմի գործակալները չը տեսնած, ցինիզմով շարունակում են իրենց գործը, աւելի մեծ թափով:

Միայն երկու շաբաթայ ընթացքում քանի հայ գրողների, ուսուցիչների ու աշակերտների, բժիշկների, փաստաբանների և խեղճ ու կրակ աշխատանքները լցրին Մետեխի մութ-մուսլ խորշերը և դեռ քանիսին նոյն վիճակն է սպառնում: Բայց այդ դեռ բոլոր չէ: Առաւելարտութիւնը ձգտում է կաշկանդել հայի ազգային կուլտուրական բոլոր գործօնները:

Նորից սև ամպեր են կուտակում հայ դպրոցների դիւսին: Նորից ստորագներ յաիշտակիչ հայեացք են ուղղել դէպի հայոց եկեղ. դպրոցական կալաճքները:

Իսկ հայ լեզուն ու գրականութիւնը կաշկանդելու, կաթողիկոսական իրաւունքները սահմանափակելու հոգը վաղուց գրանցեցում է ցարի մինիստրներին:

Եւ որպէսզի այդ բոլոր հեռաւոր ու մոտաւոր ծրագրերը հեշտութեամբ իրականացնել կարողանան— ահա նրանք փորձեր են անում ոչնչացնելու, շախշախելու այն խանգարիչ ուժը, որ հայ աշխատանքի ժողովրդի ծայրից ծնւած, միշտ էլ պաշտպան է եղել նրա իրաւունքներին ու շահերին:

Այն ուժը, որ իր կուրճքը դէմ աւելց Պլեյզէի, Գօլցիլիի բեժիմին և կարողացաւ յետ խլել հայ դպրոցներն ու կալաճքները, որ բիւրօկրատիայի հրեշտակը պրօվօկացիայի շնորհիւ բռնկւած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ կարողացաւ պաշտպանել ժողովրդի կեանքը, գոյքն ու պատիւը, որ ամեն տեղ հրապարակ է գայիս հայաճաճաներին, հարստահարածներին փրկութեան Գողգոթան բարձրացնելու— այդ ուժը ցանկացաւ ոչնչացնել:

Ոչնչացնել Հ. Յ. Գաշնակցութիւնը, բայց մութ է հնարաւոր է դա:

Մթթ է հայրամայներից ընկճւել կարող է այն կազմակերպութիւնը, որ մօտ երկու տասնեակ տարիներ անցել է

արեան, բանտերի, կախաղանների ճանապարհով՝ առանց մի րօպէ խնարհելու իր դրօշակը, որ հերոսական քայլերով դիմագրւել է բռնակալութեան հարւածները՝ առանց մի յուսահատութեան ճիչ արձակելու:

Ոչ Գա անկարելի է: Գա ցնորք է: Ինչպէս որ համատարած բեկաղիան անկարող է լինելու ոչնչացնել Ռուսաստանի աշխատաւորութեան յարաճուն ըմբոստացումը, ինչպէս որ բռնակալութեան սոսկալի հարւածները միայն աւելի զտելու և անխղճիօրէն շահկալելու են նրա յեղափոխական տարրերը, ճիշտ այդպէս էլ հակահայկական բոլոր հայրամայները աւելի շեշտելու են Հ. Յ. Գաշնակցութեան անհրաժեշտութիւնը իբրև փրկութեան մի փարոսի:

Որքան աստիանան հարւածները վերեկից, նոյնքան ամբանալու է ընդդիմադիր ոյժը ներքեկից:

Եւ ինչպէս միշտ, նոյնպէս այս ծանր օրերին, Հ. Յ. Գաշնակցութիւնը կը ծածանէ իր ներկայիս դրօշակը, նրա շուրջը հրաւիրելով ժողովրդական լաւագոյն ուժերն:

Եւ այդ ուժերը անձազոհ շարքերով կը շարունակեն յեղափոխական կարմիր պայքարը յանուն ազատութեան ու հաւատարմութեան, միշտ բարձր հնչեցնելով նրա նշանաբանը:

Թող կորչի՝ բռնակալութիւնը
Կեցցէ՛ ազատութիւնը
Կորչի՛ շահագործումն ու ճնշումը
Կեցցէ՛ հաւատարմութիւնը
Կեցցէ՛ Հայ Յեղ. Գաշնակցութիւնը:

Հ. Յ. Գ. ԱՐԵՒԵՆԵԱՆ ԲԻՒՐՈ

Ը ն կ ե ը ն ե ը,

Յանկանալով մի ընդհանուր վիճակագրութիւն կազմել ժամանակակից բռնակալութեան զոհերի մասին, սրանով խնդրում ենք հաղորդել հետեւալ տեղեկութիւնները:

1) Աերջին երկու տարիներում (1907—1908 թ.) ձեր շրջանի դաշնակցական ընկերներից քանիսն են բանտարկւել և որքան ժամանակով:

2) Քանիսն են աքտուրել և որքան ժամանակով:

3) Այժմ քանիսն են մնում դեռ բանտարկւած կամ աքտուրական:

Այդ տեղեկութիւնները ուղարկեցէք ժընեվ՝ «Դրօշակի» հասցեով:

Հ. Յ. Գ. ԱՐԵՒԵՆԵԱՆ ԲԻՒՐՈ

ՄԱՐՄԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

«Դրօշակ», պաշտօնական թղթեր, մեծադիր պատկերմներ և բաց-մանակմներ ստանալու համար պէտք է դիմել «Դրօշակի» խմբագրութեան:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ր Ն

Նաւահանգաթի Կեր. կոմիտէն սուցած է՝
Յունւարի 1-ից յուլիսի 1 1908. — Սր. ի բանւոր միութիւն 68 րուբլի 90 կօպ., Բօւ. արհ. բանւ. միութիւն 20, Արւաի իւ. անդաւ Պեհ. 10, Կօւլ. արհ. միութիւն 11. 78 Իեհակուիիների արհ. միութիւն 100. 50, Իեհակ իւ. 9, Բօւ. արհ. բանւ. միութիւն 10, Կաւեգոմ. արհ. միութիւն 7. 93, Իեհակ իւ. 10, Գարպ. բանւ. միութիւն 7, Բօւ. արհ. բանւ. միութիւն 10 րուբ., Մ. Կիրակի-ից 6ւեր 90 կ., Սր. բանւ. միութիւն 68. 58 ր., Փարնա իւ. 13. 20, Մանր-ի քիթեղի քաժանուոնից 5. 75, Բու. րնկ. արհ. բանւ. միութիւն 33, Կաւեգ. բանւ. միութիւն 6. 93, Իեհակ իւ. 9, Վարագոս խմբի ապաւիլներից 6, Էս Ըոյն իւ. 6, Իեհակ իւ. 7, Բու. րնկ. արհ. բանւ. միութիւն 33 ր.: Գոմար 454 րուբլի 47 կօպեկ:
Ջրուտեի ԿՕՄԻՏԵՆ յունւարից յուլիս. — Բանւ. խոհրդի վարչութիւնից 187 րուբլի 82 կօպեկ.: Ներաւուներն են՝ Կոյմակի արհիկից 15 րուբլի 83 կօպ., Թօրե-ւսար. 9 60, Սաւարի 13. 66, Վարդա-նօլի 18. 37, Օնանէսօլի 21. 61, Կոյմակի արհիկից Էս 6: 10, Թօրե, ւսար. ի 7. 90, Վարդանօլի 3. 85, Օլանէսօլի 7. 28, Պանասի 3ձ. 35

ևս 35, 92, Սաճարի 12, 35, Սարգ խուսք 72, Բան. խորհր. վարչու-
րիւնից 35, 94 ռուբլի. նւիրսուններն են՝ Թորձ ստակ. արս. 8, 50,
Սեյրեհի 16, 54, Կոչմանի 2, 50, Բու-ի բախնորհեհ 3, 58, Օլանտալի
արսելից 4, 82 ր.: Գումար 395 ռուբլի 76 կոպ.:

ՆՈՒ ԲԱՂԱՔԻ ՄԱՐԲԻՆ յունւարից յուլիս. — Հացագործից սար-
վնւր 25 ռուբլի, Եղբ. Բուկիացի, 1907-ի մնացորդը 14, ևս 1908
եռամսեակ 18, Եղբ. Բ-ից 4 անական 40, Ֆրանցից նւեր 15 ր.
Գումար 112 ռուբլի:

ԳԱՇՏԻ ԿՕՄԻՏԵՆ յունւարից յուլիս. — Զարմայր 40 ռուբլի, Վազ-
գէն 9: Գումար 49 ռուբլի:

ԿՕՐԻԿԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ յունւարից յուլիս. — Խնկն 6 արն. 48
ռուբլի, Յոյս յս. 1907-ի սարկվար 23, 50, Արքուն յս. 17, 50, իր
Զավուե յս. 15, 50, Արքուն յս. 16, ևս 17, Փիւր-չավուե յս. 17, 50,
Հայկ 12, Կայծակ 3, Բրիճն 18, Մեր 12, Փայլակ 6, Փիւր չավուե յս.
9 ր.: Գումար 214 ռուբլի:

ԿԱՅՏԻ ԿՕՄԻՏԵՆ յունւարից օգոստոս. — Աս-ից I եռամսեայ 45
ռուբլի, Արեօ յս. 80, Սերոբ-Աղբիւր յս. 20, Զէյթուն 23, 60, Գեամիի
ընկերներից 44, 40, Կնուրս յս. 40, Առիւծ յս. 42, Գիլակ յս. 53,
Սերոբ-Աղբիւր յս. III աստեակ 14, 50, Մոսկան յս. 31, 50, Կարմիր
խաչից 100, Օսա-ից եռամսեայ վնար 45, Վանից յս. 9, Երկիրից
20, Օսա-ից եռամսեայ վնար 45, Կարմիր կապից ևս 150, Մոսկան
յս. 6, ևս 8, ևս 8, 50 ր.: Գումար 785 ռուբլի 50 կոպկ:

ԾԱՂԱԿԱԶՈՐԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ յունւարից յուլիս. — Աւէս-ից զանա-
զան անձերից 45 ր., Հրէից նւեր 15, Հերոնական յս. 5, ևս 5: Գու-
մար 190 ռուբլի:

ԶՈՐԱՓՈՐԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ յունւարից յուլիս. — Հէսեւեայ խրմ-
բերից՝ Լոյս 4 ռուբլի, ևս 8, Չին մնացորդը 14, 83, Սերոբ-վաւու
36, Գաւիթ-Բէզ 3, 50, Լոյս 5, 50, Մասիս 7, 25, Մայր 10, Սերոբ-
վաւու 9, ևս 9, Լոյս 17, 50 ր.: Գումար 124 ռուբլի 58 կոպկ:

ԿՆՏՐ. ԿՕՄԻՏԵՆ յունւարից յուլիս. — Զրափի իւլիան յս. 56, 55
ռուբլի, ևս 11, Բանուր. 1905-ի եկամտային սորէից Ս.Կ-ից 250, Բա-
րեկամից նւեր 25, Սրբողից 15, Յոյս 20, Բագրասունի 100, Հայկ 200,
Արախ 25, Բարկիկ 25, Ա. քանցիլ 15, Արսաւ 20, Խուդ 30, № 1
գրասենիկից 50, Հայից 40, ԱՆՏԱՌԻ Տարօն յս. 10, 68 ռուբլի:

Ի ՆՊԱՍՏ ԱՅՑ ԲԱՂԱՔ. ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ

Ընկ. Ազ-ի միջոցով 8 ռուբլի. նւիրսուններն են՝ Վարդ Մուր. 1
ր., Յ. Խաչ. 50 կ., Խաչ. Գալէն 50 կ., Ս. Մկրտ. 5 ր., Պէսր Գալվ 1 ր.:

Ապաստանի ընկերների միջոցով նոր Գ-ից 15 ռուբլի. նւիրսուն-
ներն են՝ Ե. Գ. 1, 5 ր., Մ. Եր., Պ. Մ., Պ. Մ., Յ. Օհ., Ե. Եղ., Ա. Զ.,
Ս. Եղ., Ա. Եղ., Մ. Եղ., Մ. Գ., Մ. Կ., Մ. Եր. 1-ական ր., Գ. Եր. 50
կ., Յ. Յ. 20 կ., Գ. Շիւ 20 կ., Ա. Եր. 20 կ., Մ. Ն. 50 կ., Գ. Ս. 35 կ.:

Կյօրիկի ընկերների միջոցով 15 ռուբլի 25 կոպ. նւիրսուններն են՝
Երկու խմբ. Փիւր-չավուե 9, 50 ր., Աւոս 1, Ս. Մ. 1 ր., Վանագ 50 կ.,
Ազաչան 25 կ., Լուսեղէն 25 կ., Ռեսունի 50 կ., Հուր 40 կ., Երկար
50 կ., Կրակ 25 կ., Կորն 30 կ., Կացիցիկ 30 կ., Կոմիտ 50 կոպ.:

Ծաղկաձորից Տ. Սեւանի միջոցով 7 ռուբլի. նւիրսուններն են՝
Յովհաննէս 1 ր., Կերոզ, Միխայէլ, Գրիգոր, Իվան, Կոմիտով, Պէսր, Պէսր,
Միւր, Ս. Զավուր 50-ական կ., Յուսիտ 30 կ., Ոմն 20 կ., Գրի 40 կ.:

Ներդրանքան VI Կամիտէն

1908 ղեկները խնամ խաղալի նետեւայ նւիրսուններից. —
Թերզին 300 ռուբլի, Պողոս 237, Մոյսիւր 200, Կայլյան, Առանկ, Ան-
րապէտ, Արքար, Զոււալ 100-ական, Միքն-աղան, Խուց, Երկնան,
Սարգիս աղան 50-ական, Օհաննէսով 30, Մնացական, Գաւիթ, Հայկ,
Մեղր, Գ. Գասպ., Թոսուն, Էօժէն, Բօքերց, Ռաճայէլ, Ալէքսիս-
նոս 25-ական, Ամիրխան, Բոկագ, Վարդանիկ, Մօսեւն 20-ական,
Խրսթ, Վայկան, Տիկ. Եկանու, Հաչի 15-ական, Նազարով,
Բաղդասար, Յարութիւն, Իլուգիօն, Համբարձում, Վայոյց-ձոր, Արմե-
նակ, Յ. Գասպ., Տ. Գասպ., Թիրատ, Սպլիկեան. 10-ական,
Մեկիսեթ, Կարապէտ, Սուբաւ, Ռզով, Զամուրնից, Մկրտիչ, Լուսին,
Համբար, Ամբոխ 5-ական, Միխայէլ, Բացիան, Նասիթով, Մերգի,
Վազար, Բէշեւան, Միխայէլ, Շախար Գար. 3-ական, Շախար Կ.
Սուրն 2-ական ռուբլի: Գումար 2040 ռուբլի:

Գանիւրի Ներդրանքան

Հետեւեայ խմբերէ՝ Զարթիւր 1908 փետրուար-սեպտ. 181 դր. ողջ
եզիպս., Անանիս 1908 մարտ-սեպտ. 450, Կորիւն 1908 մարտ-օգոստ.
545, Ծաղիկ (1907-սարայ) 55, Երեմիաս 1908- յունիս-օգոստ. 495,
Կորիւն յս. համակիրներէ 75, Հարայէն (Հապիչիստան) Զաւից, Հապի-
չիանի ձեռնարկ հանգանակամ 146: Գումար 1947 դր. ողջ եզիպս.:

Փառիգի Մարմին

Գաւիթից 20 ժրանկ:

Մրցասանի կէտեր. կոմիտէն

ՔՐԱՐԱԲՐԻԿ ԵՐԶՆՆ 1908. Թ. — Հին-քաղաք — Տիգրան 25
ռուբլի, Սալմոն 10, Ժիվան, Բով, Ռոստրո, Ռոստրոնանց, Խիդ,
Հէյուար, Մովսէս Բարայեանց 3-ական, Պետո 2, Մարիկ 3, Լաւո
2, Նիկայայ ՄԿ. Ստեփաննան 2, Գրիգոր 3, Համբարձում
Մովսէսնան 3, Համբարձում 2, Գալուստ, Յովհաննէս Ռ., 2
Փ., Տիտան, Սիմէոն, Սրճաւոր Ռոմ, Սառմանայ 1-ական, Կօշ-
կանար 50 կ., Յովհաննէս Դավթ. 2 ր., Մարտիցոս 1, Իշխան
1, 50, Էլեքսան Գամպիշ 1, 50, Լեւոն Տ. Պետր. 1, Ղևնդ
Տ. Մարտ. 1 ռուբլի: Գումար 89 ռուբլի 50 կոպկ:

Վարայր Նահիժ 10 ռուբլի, Ճիւղաւոր 5, Երամիշտ, Աղոբ-
ձանակ, Էփէլտի, Չինուր, Հայրապետ Յովակիմեան, Խուղան,
Գեալու, Փիլոս, Մարգար Դավթի, Սեւանայ, Յակոբ. 2, Սար-
գիս Ռ. 5-ական, Մի. Ռոմ 3, Կայծ, Կայծակ, Ռոստրո, Բարսեղ,
Երեմիոն, Խոջուկ, Ռաշիդ, Համբո 2 ական, Շագո. 3, Արծիւ,
Բարա, Յարութիւն 8, 1-ական ր.: Գումար 103 ռուբլի:

Միւրճ, Համբարձում 60 ռուբլի, Տէր. Պողոս, Նիկողայոս Կար
3-ական, Մեկից, Սուրէն, Հայկանուշ, Նաոդ, Ռաշալար 2-ական,
Սարգիսնան, Ռաշիդ, Այգեպան, Լրիստափոր 1-ական ր.: Գու-
մար 80 ռուբլի:

Զարայր Եր. Կարպետ Փանոս, Վազգէն, Մի. Ռոմ 2-ական
ռուբլի, Ճաւարան 3, Ժառուկ, Մի. Ռոմ 1-ական, Մի. Ռոմ 50
կոպ.: Գումար 11 ռուբլ. 50 կոպ.:

Կայարանի Ներկայագործ, Պիտոյան, Տէրտէր 2-ական ռուբլ.
Երանուղէ. Երծի, Խանուղան, Օգնական, Կարմաստակ, Կա-
նուսան, Այգեպան, Կարապետ, Ռաշալար, Սրբիւ. 1-ական ր.: Գու-
մար 16 ռուբլի:

Մայիսի ժողովի Երթասան. Արեգակ 3-ական ռուբլի, Հայրո,
Արթանակ, Կայծակ, Մեխակ, Զարբաշ, Խոնէն, Զաւ 1-ական,
Հայրիկ 70 կ., Ռոստամ 60 կ., Ժիւղաւոր, Մայիս, Չինուր, Անակ,
Խեղճ 50-ական կոպ.: Գումար 16 ռուբլի 80 կոպ.:

Ընդամուր զումար 316 ռուբլի 80 կոպկ:

Քաղ-Բաղնիքի Ներդրանքան

1908 յունւար 26-էն յուլիսի վերջ: — Հետեւեաններէ՝ Խոզան-
տատ 250 դր.: Փող. Փողոյիկ 492, Արուսեակ 785, Շաքէ 133,
Խիլանայ քրոյրեր 88, Ռազմիկ 237, 1, 2, Սերոբ. վաւու. 369,
Թոնցիկ 126, Խոջան-Տաղի վիճակահանութենէն 47, Փողոյիկի
վիճակահանութենէն 5, Խոջիմ ձեռքով հետեւեաններէ՝ Շ. Կալ-
մասրանկան 30, Կ. 2, Կայծակ 25, Կ. Զորիւր. 15, Ծ. Պալի-
զան 20, Ռոմ 20, Դանիթ 15, Հրայր 15, Փառնիւրզձան Եղբ.
15, Ֆրանցիկ 15, Նուշ 10, Գաշթեմաննան 5, Կ. Մ. 2, 5,
Արարատ 16, Շաւուս 5, Թ. Խաչատուրեան 5, Խեւթ 5, Արզ.
5, Վիշապ 5, Գ. Քէլտիկեան 10: Գումար 2773 5 10 դր. ողջ:

ՀԱՅ ՅԵՂ. ԳՕՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լ Ո Ց Ս Տ Ե Ս Ս Ն Տ Ը Ն Ե Վ Ո Ւ Մ

- | | |
|---|-------|
| 1. Պօքիտիպի համակներ, ԱՐԱՐՏԱՄԻՆ. | ճր. 1 |
| 2. Լոկացից ընկերներից, ԱՐԱՐՏԱՄԻՆ. | — 30 |
| 3. Ընդհ. կրթութեան քերտքի հներ, Գր. Ճ. Օլիվի. | — 50 |

Մ Ե Ծ Ա Դ Ի Բ Գ Ա Տ Կ Ե Բ Ն Ե Բ

Բարկէն, Պետո, Կարո, Սերոբ-աղբիւր, Բրիստափոր, Վա-
համ, Հրայր, Տարօնի Արիւծը և իր ձագուկները, Վաղար-
շակ, Թորգոմ, Խան. Կուռուպաշի մահատակիկը, Կարսի
ժամանակի զոհերը, Վազգէնի մարտական խուսրոյ,
Բասէժի և Դէլի-Բարայի կուռի ֆէլայիմները:

ՀԱՏԸ 50 ՄԱՆՏԻՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶՍՏԱՄԱՐՏԸ (խոշոր դիրքով) հատը 1 Ֆր.:

Ապստարանք 5 Ֆր. — ԷՍ պակաս չի ընդունուիր:

Շուտով լոյս կը տեսնեն Ողբ 12 մեծադիր պատկերներ:

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ Ե Բ

Հայ յեղափոխական հերոսների պատկերներով: Պատ-
րաստի-կան 36 տեսակ:
Բաց մասնակները կուղարկւի մ ա ռ ե ո մ ք ի չ ը 3 սէրիա
(108 հատ) 6 Ֆրամկ: